Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 186

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՕԳՈՍՏՈՍ 1884 (Ն. Տ.) 27 ՕԳՈՍՏՈՍ

5 ԶԻԼԳԱՏԷ 1301

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՊԱՅՄԱՆՔ

Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ. երկու անգամի համար 2 ղուրուշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։

Օրագրոյս վերաբերեալ նամակ կամ որ և իցէ գրութիւն պէտք է ուղղել

«Առ խմբագրութիւն ԱՐԵՒԵԼՔ օրագրի»

ԹՄԲԱԳՐԱՏՈՒՆ. Ղալաթիա, Նորատունկեան խան։

Իսկ գաւառներէն հետեւեալ հասցէիւ՝

درعلیه‌ده غلطه‌ده نورادونکیان خانده { اره‌ولك } غزته‌سی اداره‌سنه

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Պօլսոյ	համար	Տարեկան	դահեկան արծաթ	200
»	»	Վեցամսեայ	» »	100
»	»	Եռամսեայ	» »	50
»	»	Հատով	» »	1
Գաւառաց	համար	Տարեկան	» »	240
»	»	Վեցամսեայ	» »	120
»	»	Եռամսեայ	» »	60
Օտար	երկիրներ	Տարեկան	Ֆրանք	56
»	»	Վեցամսեայ	»	28

Դուրս ղրկուած լրագրաց համար ծախքը խմբագրութեան վրայ է։

40 ՓԱՐԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 15 ՕԳՈՍՏՈՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

—o—

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴՐՕՇԻՆ ԱՆԱՐԳՈՒՄՆ Ի ԳԵՐՄԱՆԱՑ

(Թայմզ, 20 օգոստոս)

«Աշխարհ տակաւին իւր տարիքն առնըլու շատ պէտք ունի մինչեւ որ դադրի տղայական հետաքրքրութեամբ մը դիտելէ իւր մեծ մարդոց ամենափոքր շարժումները։ Բնական էր որ Քալնոքի կոմսին այցելութիւնն ի Վարձին շատ մը մեկնութեանց առիթ պիտի տար, լեցնելու համար եւրոպական լրագրաց դատարկ էջերն այնպիսի ժամանակի մը մէջ ուր կարեւոր խնդիրք չկան։ Այս տեսութեամբ յոյժ ի դէպ եկաւ այն ծանուցումն ալ թէ Գերմանիոյ նախարարապետն հրաւիրած է իւր հիւրը 24 (ըստ այլոց՝ 48) ժամ եւս երկարաձգել իւր այցելութիւնն։ Բայց թող մեզ ներուի լուրջ կարեւորութիւն չտալ այս առթիւ խորախորհուրդ մարգարէից ոմանց կողմէ արտայայտուած գուշակութեանց։ Կ'ըսուի թէ երկու նշանաւոր աշխարհավարները ծրագրեր են եւրոպական վեհաժողով մը, որ պիտի քննէ Քոնկոյի խնդիրն, առողջապահական խնդիրն, «և համազգային կարեւորութիւն ունեցող ուրիշ նիւթեր», —վեհաժողով մը, որոյ անդամք, այնպիսի չքեղ հիմնադիր մ'ունենալով իրենց առջեւ, այս նոր ժողովոյ ցկեանս անդամակցելու պիտի կոչուին անշուշտ։ Կը կարծուի նաեւ թէ նոքա եղանակ մը գտեր են ջնջելու ընկերվարութեան ծաւալումն ի Գերմանիա և յԱւստրիա. ուրիշներ են որ երեք կայսերք տեսակցին առաջիկայ ամսոյ մէջ. ոմանք ալ կան թէ իշխանն և կոմսն համաձայներ են կազմելու «դիւանագիտական դաշնակցութիւն մ'ընդդէմ եգիպտական աշխարհավարութեան Պ. Կլատսթոնի դահլճին»։ Այս վերջին խնդրոյ կարգադրումը միայն կը բաւէր շատ ժամանակ գրաւելու։ Բայց Պիզմարք իշխանը Դեսպանախորհրդոյ անյաջող ելից պատճառաւ գերմանական լրագրաց ցոյց տուածին չափ զայրացած լինի թէ ոչ, կրնանք ընդունիլ թէ Դեսպանախորհրդոյ ներկայացեալ խնդիրք իշխանին և կոմսին նիւթ ընծայած են խորին քննութեան։ Չենք կրնար նաեւ անգիտանալ թէ Պիզմարք իշխանն այս խնդիրներէ զատ ուրիշ պատճառներ ունի զայրանալու Անգլիոյ դէմ։ Անկրա Բէքուէնայի գործն, որ երբեք խիստ քիչ կարեւորութիւն ունի մեզ համար, յանկարծ մեծ համեմատութիւններ ստացաւ գերմանական աչաց առջեւ, և կը ցաւինք ըսել որ մեր (Անգլիոյ) կառավարութեան ընթացքը պարսաւելի է անկարեւոր խնդրոյ մը այսչափ մեծ կարեւորութիւն տրուելուն համար։ Պիզմարք իշխանը կը խորհի թէ Անգլիա Գերմանիոյ նկատմամբ ուղիղ և քաղաքավար ընթացք մը չբռնեց, երբ Պերլինի կառավարութիւնն հարցուց Լոնտոնի դահլճին թէ Անկրա Բէքուէնայի (Հարաւային Ափրիկէ) գերմանական գրաւման դէմ Մեծն Բրիտանիա առարկութիւն մ'ունի։ Իրողութիւններն անկողմնակալ ոգւով քննելով, կը պարտաւորինք խոստովանիլ թէ Պիզմարք իշխանը քիչ մը իրաւունք ունի դժգոհ լինելու։

Ափրիկէ բաւական ընդարձակ է ասպարէզ տալու համար թէ՛ Գերմանիոյ և թէ՛ Անգլիոյ ձեռնարկութեանց։ Այն Անգլիացիներ իսկ որք ամենէն աւելի յօժար են աշխարհի վրայ տիրապետելու քաղաքականութեան՝ չեն նախանձիր տեսնելով որ Գերմանիա փորձ փորձէ իրեն համար հրապարակներ գտնել կամ գաղթականութիւններ հիմնել Ափրիկէի հարաւային արեւմտեան եզերաց վրայ։ Այն կողմեր աշխարհագրական և այլ քննութիւններ կատարելով, բնակիչներ հաստատելով և քաղաքակրթութիւն ներմուծելով, Գերմանիա լաւ ընդունելութիւն պիտի գտնէ մեր կողմէ։ Զայս մեր կառավարութիւն պարտաւոր էր յայտնել շնորհօք, երբ իւր կարծիք կը հարցուէր։ Բայց Պիզմարք իշխանը տեղի ունի գանգատելու թէ երբ ինք մեր կառավարութեան դիմեց այնպիսի ոգւով մը որ ցոյց կուտար թէ մեր շահուց դպչելու կամ մեր դիւրազգածութիւններ վիրաւորելու դիտում չունէր, չկրցաւ Լորտ Կրանվիլը բերանը բանալ։ Այն խնդիր թէ Անկրա–Բէքուէնա Բարի Յուսոյ Հրուանդանի բրիտանական գաղթականութեան ստացուածոց մասը կը կազմէ, թէ ո՛չ՝ անտէր երկի՞ր մ'է, նախ մէկ իշխանութեան հարցուեցաւ, ապա ուրիշի մը. և նոյն միջոցին այս յապաղմանք կարծիք մը գոյացուցին ի Գերմանիա թէ մեր նպատակն է ուրիշներն հեռի պահել այնպիսի հողերէ որք մեզ անպէտ են և չենք գրաւեր։ Գերմանաց կողմէ չափազանց անհամբերութիւն ցուցուած կրնայ լինել. բայց ստուգիւ մեր կողմէ յոյժ յապաղկոտ ընթացք մը բռնուեցաւ։ Լորտ Քիմպըրլի, մինչ Գաղթականութեանց Նախարար էր, յայտարարեր է թէ Անգլիա իրեն չսեփականեր Ափրիկէի հարաւային արեւմտեան եզերքն։ Այս կարծիքը գիտնալ և ըստ այնմ շարժիլ պարտաւոր էին իւր յաջորդն և Արտաքին գործոց Նախարարութիւնք։ Բայց Պիզմարք իշխանը պարտի տեղեակ լինել այժմ թէ իւր գաղթային աշխարհավարութիւն, իւր ցոյց տուած սահմաններով, ընդդիմութեան չպիտի բախի Անգլիոյ կողմէ, և պաշտօնական թերութիւններէ ծագած վիշտը պէտք է փարատի։ Եւ կը կարծենք թէ փարատելու վրայ է. զի Գերմանիոյ կէսպաշտօնական մամուլն հականգլիական խիստ լեզուն չենք կրնար ընդունիլ իբրեւ յայտարար Պիզմարք իշխանին մտաց։ Կարգապահութեան սովորութիւնք որ սքանչելապէս կ'երեւին գերմանական բանակին մէջ՝ շատ չեն տեսնուիր այն գերմաներէն լրագրաց խմբագրութեան մէջ որք կառավարութեան գաղափարները բացատրելու և պաշտպանելու պաշտօնն ունին։ Այս լրագիրք միշտ հակամէտ են սխալ հասկնալու իրենց տրուած նշանաբանը, սահմանէն դուրս ելնելու և փոխարէն թշնամեաց՝ կրակ բանալու դաշնակցաց վրայ։ Եթէ ո՛ և է կարեւորութիւն տայինք քանի մը լրագրաց գործածած կծու լեզուին՝ հարկ կը լինէր կարծել թէ բոլոր Գերմանիա Անգլիոյ դէմ մոլեգին կռիւք ցցեալ է։ Քէօլնիշ Ցայթունկ ջերմ հրաւէր կարդաց Ֆրանսացւոց՝ մոռնալ Գերմանիոյ դէմ իրենց վէճեր, և անոր հետ միանալ հարուած մը տալու համար Անգլիոյ։ Ֆրանսական ողջմտութեան համար պատուաբեր է յիշել թէ այս գերմանական առաջարկներ ծիծաղաշարժ թեթեւամտութեամբ ընդունուեցան, և Բարիզեան լրագիր մը, Քէօլնիշ Ցայթունկին բանդագուշանքն արտատպելով, այնպիսի դիտողութիւններ բրաւ, որք կը յուսացուի թէ այս տաք հրաւէրներու վրայ պաղ ջուր թափելու հետեւանքը պիտի ունենան։

Ֆրանսացիներն ալ մեզ պէս պարտին տեսնել թէ՛ գերմանական եռացեալ բարկութեան պղպջանքը շոգիանալով պիտի անհետանան զի տեւական վէճի կամ երկարժամանակեայ անհամաձայնութեան առիթներ չկան ի մէջ Գերմանիոյ և Անգլիոյ։ Ամենէն առաջ մեք կը հրճուինք եթէ որ և է պարագայ մերձեցում յառաջ բերէ Գերմանաց և Ֆրանսացւոց միջեւ, բայց երբ այդ հաշտութիւն տեղի ունենայ, Անգլիոյ դէմ թշնամութիւն չպիտի լինի ադոր կէտ նպատակն։ Մեր դիտումներուն Ֆրանսացւոց կողմէ միշտ կասկածոտ աչօք նկատուելուն վարժած ենք. բայց ամեն անգամ որ մեր մէջ ծագող դժուարութիւնք բանականութեան լուսով քննուին, կը տեսնուի որ երկու երկիրներուն միայն շահն է բարեկամ մնալ և լաւ բարեկամ։ Այսպէս է մեր յարաբերութիւն Գերմանիոյ հետ ալ, այս եղած է և պիտի լինի։ Եւրոպիոյ այս երկու մեծ Տէրութիւնք չափազանց զգայնութեան հակամէտ են այնպիսի նկատումներով զորս մեք միշտ ի մտի պիտի ունենանք։ Ֆրանսա 1870–71ի սոսկալի եղելութեանց վիշտը կը կրէ դեռ, և կը յուզուի ի տես ամեն բանի որ ցոյց տայ թէ ուրիշ Տէրութիւնք կը ջանան օգուտ քաղել իւր կարծեցեալ տկարութենէ. իսկ Գերմանիա իւր յաղթութիւններէ տակաւին չէ քաղած իւր քաղաքական կազմակերպութեան վրայ բացարձակ վստահութեան զգացումն։ Ուստի, նա ևս հակամէտ է շուտ հետեւցնելու թէ ուրիշ ազգեր բաւական յարգանօք չեն վարուիր իրեն հետ, կամ իրեն դէմ չարիք կը խորհին, երբ պարզապէս իրենց յատուկ գործոց պարապելով՝ չեն յաջողիր նոյն գործոց վրայ գերմանական սեւեռութեանց համակարծիք լինել։ Բաց աստի, այն մեծ և երախտագիտական անձնուիրութիւն զոր Պիզմարք իշխանին նկատմամբ կը զգան Գերմանաց ամեն դասերը՝ ծայրայեղ եռանդ մը կը ներշնչէ ասոնց՝ դիտելու իշխանին կարծեաց ամեն նշաններն և զայն խոշորցնելու, յուսալով թէ այսպէս ի հանդէս կ'ածեն իրենց անձնուէր ըղձացումներն և ծառայութիւն մը կ'ընեն Նախարարապետին։ Այսպէս Պիզմարք իշխանին անհամբերութեան կամ բարկութեան երեւոյթները թերթէ ի թերթ փոխանցմամբ կը չափազանցուին, մինչեւ որ հասնին այնպիսի համեմատութեանց զորս իշխանն իւր մտքէն իսկ չէր անցուցած։ Այս առաւօտ կը հրատարակենք Լիվրբուլէ հեռագիր մը, ծանուցանող թէ անարգանք մը եղեր է բրիտանական դրօշին ի Պակէյտա, Արեւմտեան Ափրիկէ։ Նորագոյն և ստուգագոյն տեղեկութեանց պարտինք սպասել, հասկնալու համար թէ բոլորովին անհիմն պատմութիւն մ'է այս, թէ ո՛չ իշխանութեան զեղծում մը գերմանական պաշտօնակալի մը կողմէ ի գործ դրուած։ Բաւական ցոյց տուինք թէ հաւատք ունինք սիրալիր յարաբերութեանց շարունակման մեր և Գերմանիոյ միջեւ, և մեր պարտքն է զգոյշ կենալ ո՛ և է կողմէ եկող անիմաստ կամ չարամիտ զրոյցներու դէմ որք կրնան մթագնել այդ բարեկամական յարաբերութիւններ։»

Աւասիկ Թայմզի յիշած հեռագիրը,

«Լիվըրբուլ, 19 օգոս. Ըստ հասած տեղեկութեանց նայելով, գերմանական մարտանաւ մը անարգանք մ'ըրեր է անգլիական դրօշին Ափրիկէի արեւմտեան եզերաց վրայ ի Պակէյտա, քաղաք ի մէջ Քիդգայի և Լակոսի։ Քիդգայի անգլիացի պաշտօնակալք մտեր այցելեր են Պակէյտա, և ի խնդրոյ բնակչաց բրիտանական դրօշը պարզեր են ցոյց տալու համար թէ քաղաքն անգլիական պաշտպանութեան ներքեւ առնուած է։ Մի քանի օր յետոյ Մէօվէ անուն գերմանական մարտանաւն անդ հասեր է, և դրօշին ձողը կտրելով, վերուցեր է անգլիական դրօշն և անոր տեղ գերմանական դրօշ պարզեր է։ Կը կարծուի թէ Լոնտոնի Ներքին գործոց նախարարութիւնն այս նկատմամբ տեղեկութիւն ստացած է։

«Արեւմտեան եզերքէն առնուած վերջին տեղեկութեան նայելով, այս պատմուած յանդուգն գործը քննելու պաշտօնով անգլիական յանձնախումբ մը Քիդգայէ ճամբայ ելնելու վրայ էր։

«Դէպքին թուականն իմաց չտրուիր։»

—o—

Ռէօյթէրի գործակալութիւնը սապէս կը ծանուցանէ նոյն եղելութիւն Թայմզի նոյն թուոյն մէջ.

«Համպուրկ, 19 օգոս. Տեղւոյս Համպուրկէր Քօրէսբօնտէնց լրագիրը Մատէյրայէ առնուած մասնաւոր հեռագիր մը կը հրատարակէ, ծանուցանող թէ Ափրիկէի արեւմտեան եզերաց գերմանական կայսերական քօմիսէր տոքթ. Նախթիկալ Մէօվէ մարտանաւով այցելեր է Կամէրունս և Պիմպիա, և այդ երկու տեղեր ալ գերմանական դրօշ պարզեր է, կայսրութեան հովանաւորութիւնն հաստատելով։»

ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

—o—

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ. Ռամկավարականաց ընտրելի Պ. Քլիվլէնտ ըստ սովորութեան քաղաքական նամակով մը կը յայտնէ թէ կ'ընդունի իրեն առաջարկեալ դերը։ Պ. Քլիվլէնտ կը յայտարարէ թէ կուսակից է վերաքննութեան ամերիկեան Սահմանադրութեան, և թէ Հանրապետութեան Նախագահը վերընտրելի պէտք չէ լինի։ Կ'ըսէ թէ գործաւոր դասերը պէտք է պաշտպանուին այն խաղաղ ջանից մէջ զորս կ'ընեն իրենց իրաւունքներն հաստատելու համար, երբ դրամագլխոց դաշնակցութիւնք կը սպառնան այդ իրաւանց. թէ կառավարական պաշտօնատարներ անուանելու համար նոցա կարողութեան միայն հարկ է նայիլ և թէ այս պաշտօնատարաց թոյլ պէտք չէ տալ գործիք լինել քաղաքական կուսակցութեանց։ Պ. Քլիվլէնտ մաքսային դրութեան վրայ չխօսիր, և հետեւապէս կը զգուշանայ ազատ–փոխանակութեան դրօշը պարզել, որուն համամիտ չէ ռամկավարական կուսակցութեան ամբողջութիւնը։

—Գործաւոր դասուց ընտրելին, Պըթլէր զօրավարն ալ երկայն նամակ մը հրատարակեց, որով կը յայտնէ թէ Նախագահութեան թեկնածու պիտի լինի։ Քաղաքական երկու մեծ կուսակցութիւններն հաւասարապէս կը քննադատէ, ըսելով թէ ժողովուրդն ոչինչ կրնայ ստանալ անոնցմէ. որովհետեւ Ռամկավարականք իրենց նախկին սկզբունքները լքած են և Հանրապետականք մենաշնորհներու և մենավաճառներու դրութիւնն առաջ կը տանին։» Խորհուրդ կուտայ զինք ընտրողներուն որ քաղաքական երրորդ կուսակցութիւն մը կազմեն «Ժողովրդային կուսակցութիւն» անուամբ, բաղկացեալ գործաւորներէ, ամերիկեան թղթադրամի պաշտպանութիւն խնդրողներէ, մենավաճառի հակառակորդներէ և այժմեան քաղաքական և վարչային դրութեան գանգատող ամեն խումբերէ, կուսակցութիւն մը որ միւս երկու մեծ կուսակցութեանց միջեւ հաւասարակշռութիւն հաստատէ և իւր ուզած կողմը կարենայ հակեցնել քաղաքական իշխանութեան նժարը։

ՆՈՐ ԳԻՒՏ ՄԸ. Օդապարիկին օդին մէջ այս կամ այն կողմ դարձնելու և նաւու մը պէս ղեկով կառավարելու հնարքը վերջապէս գտնուեցաւ։ Մինչեւ ցարդ օդապարիկներն հովին տարած կողմը միայն կ'երթային. այսուհետեւ շոգենաւու մը պէս պիտի կրնան կառավարուիլ։ Այս գիւտի պատիւը կը վերաբերի Պէրնար և Քրէպս անուն Ֆրանսացի երկու ճարտարագէտ սպաներու, որք իրենց գիւտը փորձելէ յետոյ, հաղորդեցին Գիտութեանց Ակադեմիային։ Երէկի թղթաբերով առնուած բարիզեան լրագիրք նոր օդապարիկին նկարագրութիւնն և պատկերը կը պարունակեն։ Օգոս. 9ին օդապարիկ մը բարձրացաւ Մէօտոնի օդապարիկի զինուորական գործարանէն, իւր մէջ ունենալով Ֆրանսացի երկու սպաներ։ Օդապարիկը գլանաձեւ էր, և կը պարունակէր ելեկտրական շարժիչ գործի մը, պտուտակ մ'և ղեկ մը։ Որովհետեւ այս գիւտ զինուորականաց ձեռամբ եղած է, և նորաշէն օդապարիկը պիտի գործածուի գլխաւորապէս պատերազմի ատեն՝ Ֆրանսական բանակներուն ծանօթացնելու թշնամեաց շարժումները, կ'ուզուի նոր գիւտին գաղտնիքը պահել։ Մեքենան 10 ձիու ոյժ ունի և չորս ժամու համար շարժիչ ոյժ, Բլօշէսի դրութեամբ։ Օդապարիկն հով չեղած ժամանակ մը բարձրացաւ մինչեւ 30 մեդր, պտուտա-

---

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

)(14)(

ՖՈՐԹՈՒՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԳՕՊԷ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՈՆ ԼԸՔՈՔ ԻՆՔԶԻՆՔ ԿԸ ԾԱԾԿԷ

Դ.

Զախող պայման առաջին անգամ տեսնելիք մարդու մը դէմքն որոշելու համար։

Ապահովութեան պետն հազիւ կրնար նշմարել զայն ժամացոյցի արկղին շղդանկիւն ծակէն, որ ճշդիւ իւր աչերուն հաւասար բարձրութեամբ բացուած էր։

Միայն սեւ ու թաւ մօրուք մը կը նշմարէր, վասն զի փեղոյրին վար դարձած եզրը կը ծածկէր մարդուն ճակատն, և այսպէս երեսին վերին մասն ստուերի մէջ կը մնար։

— Արդեօք նե՞րս պիտի մտնէ, դո՞ւրս պիտի ելնէ, կը հարցնէր ինքնիրեն դարանակալն, և այս խնդիրը միայն չէր որ մտահոգութիւն կը պատճառէր իրեն։

Գիշերայածը ոճրագործն էր, այս մասին տարակոյս չունէր, և չպիտի թողուր որ եկածին պէս երթար։

Բայց հարկ կը լինէր որոշել թէ անմիջապէս նշան տալով ձերբակալե՞լ տալ պէտք էր թէ քիչ մ'սպասել։

Ազդարար սուլն անմիջապէս արձակելով՝ կը զրկուէր այն օգտակար տեղեկութիւններէն՝ զորս կրնար քաղել ոճրագործին վարմունքէն։

Անշուշտ առանց պատճառի չէր եկած թափառիլ այն տան մէջ՝ ուր ոճիրները գործած էր և ուր իւր զոհերէն միոյն գլուխը փռուած։

Պատճառը կը գուշակէր կամ գուշակել կը կարծէր ապահովութեան պետն։

—Արեւու լուսին պէս պայծառ է, կ'ըսէր հետեւութիւն հանելու այն արագութեամբ՝ որ սեփական էր իրեն։

Այս չարաճճին գիտէ որ իւր համբը բռնուած է և սպանեալ կինն ալ դիակնարանն է։ Բայց չգիտեր թէ մեք գիտենք այն տունն ուր ոճիրները գործած է, և հոն կ'սպասենք իրեն։

Միայն կը կասկածի թէ քանի մ'օրէն ամեն բան երեւան պիտի ելնէ։

Մինչեւ իսկ եթէ մեք հոս եկած չլինէինք, դրացիները վերջապէս պիտի զարմանային այս տան վարձակալին յանկարծ չուելուն վրայ, առանց հաշուելու դիակին հոտն որ թաղին մէջ պիտի ծաւալէր։

Ասոնք մտածելով մեր մարդն ըսեր է ինքնիրեն թէ սպանութեան հետքն աներեւոյթ ընելու համար պէտք էր օգուտ քաղել առաջին գիշերէն։

Այժմ ամեն բան կարգի պիտի դնէ ճաշարանին մէջ, դիակը պատշաճապէս պիտի ծրարէ գաւթին մէջ խռնել արկղերէն միոյն մէջ, և ինքնին պիտի շալկէ տանի այդ բեռը, զոր միւսին պէս Համբին վերցնել տալ կը յուսար։

Այդ Մէքէն, զոր քիչ մ'առաջ կը կոչէր, սպասուհին է, որ իւր դաւակիցը պարտի լինել, և երէկ իրիկուն տեսնելով որ չէր վերադառնար, մեկներ է՝ դուռները բաց թողլով, որպէս զի կարենայ ներս մտնել։

Ածխավաճառուհին գրեթէ ըսաւ ինձ թէ սպասուհին անգլիացի էր, և ինքն ալ անգլիերէն խօսեցաւ։ Ճշդիւ այսպէս է, և այժմ գործը մասին ծայրն է։

Բայց ամենաճարտար որսկան մը հետ է մեր գործն, և եթէ իւր գործն սկսելէ առաջ ձերբակալել տամ, աներկրայ եմ որ իսկոյն պատմութիւն մը պիտի հնարէ իւր հոս ներկայութիւնը մեկնելու համար։

Ես ալ՝ եթէ անոր տեղը լինէի, չէ պիտի վարանէի։ Կրնայ ըսել թէ սպանեալ կնոջ տարփածուն էր... գաղտնաբար զայն տեսնելու կուգար... ապացոյց՝ որ անոր մեռած լինելը չէր գիտեր... կամ ուրիշ պատմութիւն մը այս ճաշակով։

Եթէ՝ ասոր հետ ի միասին՝ իւր ով լինելը ծածկելու մասին ալ բաւական ճարպկութիւն ունենայ, որ դժուարին չէ օտարազգիի մը համար... որովհետեւ անգլիացի կը թուի... կրնայ մեզ վեց ամիս կամ մէկ տարի մ'զբաղեցնել ամուլ և թերեւս խայտառակ ապարդիւն հետախուզութեամբք։

Ո՛չ... ո՛չ... պէտք չէ այսպէս լինի։ Զեմ ուզեր խաղի գալ։ Պէտք է որ այդ թշուառականը գործի վրայ բռնենք... այս է միակ միջոց անոր ուրացումն արգիլելու։

Օ՛ն, մարդուկս, գնա՛ մաքրէ ճաշարանին տախտակամածն, և պահարանին մէջ քշած գլխակդ ալ սնտուկին մէջ ծրարէ։

Երբոր կարգը սնտուկը վերցնել տանելու գայ, յայնժամ կ'օգնենք քեզ։

Շչակս քովս է, դահլճին պատուհանը բաց է, և Բիէշաշի ականջը սուր։

Վայրկենի մէջ կը կատարուի գործը։

Այս ամեն եզրակացութիւնք հանուեցան, բոլոր այս յատակագիծ չինուեցան՝ գրելու համար պէտք եղածէն աւելի կարճ ժամանակի մէջ, մեռաքնեայ փեղոյրով մարդուն սենեակը մտնելէ առաջ ըրած զննութենէն աւելի նուազ ժամանակի մէջ։

Ապահովութեան պետն, սպասելու մտադիր, լռիկ կեցաւ։

Անակնկալ դէպքերու համար պէտք եղած զգուշութեանց միջոցները ձեռք առած էր. շչակը ձեռքն էր, և միայն կը մնար հաւատարիմ, քաջ և արթուն Բիէշաշի ազդարարելու համար շրթունքին տանիլ։

Ուստի բնաւ վախնալու բան մը չունէր, ընդհակառակն՝ ամեն բան պիտի շահէր թողլով ոճրագործն որ իւր գործողութեանց սկսէր։

Չարաճճին հոն էր միշտ. ոչ քայլ մ'առաջ գնացած էր, ոչ ետ, այլ կը շարունակէր իւր շուրջը նայիլ՝ առանց գլուխը վեր առնելու։

Անշուշտ իւր ընելիքը կը մտածէր, կը թուէր նաեւ թէ դժուարութիւն կ'զգար ներքնասենեկին սեմէն ներս անցնելու։

— Հոս չէ, մըմռաց յոյժ լաւ Փրանսերէնով. ո՞ւր կրնայ լինել։

Դարանամուտը կը լսէր այս խօսքերն և ուրախութեամբ կ'ըսէր ինքնիրեն.

— Բերնովդ կը բռնուիս, թշուառական։ Փնտռէ անգլիացի սպասուհիդ... չպիտի գտնես... քթիդ խնդացեր է... քեզնէ նուազ անմիտ է եղեր... վասն զի չպիտի կրնանք բռնել զայն այս գիշեր... ճշմարիտ է որ բան մը չկորսնցներ սպասելով...։

Եւ յանկարծ միտքը խորհուրդ մը յղանալով, ապահովութեան պետն ըսաւ ինքնիրեն.

— Եթէ վերն էր սպասուհին... անխոհեմութիւն ըրի առաջին յարկին սենեակներն աչքէ չանցունելով... երկրորդ դիակին երեւան ելնելը վրդովեց զիս։

— Գետնին վրայ այս աշտանակը... զարմանալի է, ըսաւ անծանօթը, շարունակելով իւր մենախօսութիւնն։ Արդեօք նա՞ դրաւ հոս։

Այս միջոցին առկայծեալ մոմը վերջին լոյս մ'արձակեց, որ դժբաղդաբար շչակին վրայ ցոլաց, զոր դարանակալն իւր բերնին մօտ բռնած էր, այսինքն ճշդիւ ժամացուցին արկղին վրայ բացուած ծակին ետին։

Ցեռոյ մոմին պատրոյգը մարեցաւ՝ ծաւալելով այն պժգալի հոտն, որ երբ վերջին հառաչն է այն մոմերուն, զորս արդի ճարտարութիւնը խնայողաբար կը չինէ քիչ մը մեղրամոմով և շատ մը ճարպով։

Ապահովութեան պետն երկար կենալով ներքնասենեկին մէջ, ուր առջի իրիկունէն ի վեր կրակ չէր վառուած, պաղ առած էր, և չէր նշմարած թէ հարբուխ կը լինէր։

Հարբուխն առթի մը կ'սպասէր երեւան ելնելու համար. մոմէն ելած ծխալից շոգին փռնգտալու ստիպեց զայն։

Ինքզինք բռնել ուզեց, բայց փռընգտուքը զարհուրելի շառաչմամբ պայթեցաւ, և ա՛յնչափ ուժգին ցնցում մը տուաւ անոր, որ շչակը ձեռքէն պրծելով՝ արկղին յատակն ինկաւ։

Այս ձախող դէպքէն մատնուած դարանամուտն ինքզինք դեռ չգտած, անծանօթն, արտասովոր պաղարիւնութեամբ մ'և արագութեամբ ժամացոյցին քով վազեց, ձեռքը բանալիին երկընցուց, որ փականքին վրայ մնացած էր, և երկիցս դարձունելով՝ դուրս քաշեց, գրպանը խոթեց և մեկնեցաւ։

Ապահովութեան պետն իւր լարած որոգայթին մէջ բռնուելով, անկարող էր այնուհետեւ հետամուտ անծանօթին, զոր ա՛յնչափ կը բաղձար ձերբակալել։

Դ.

Ապահովութեան պետը, ժամացոյցի պահարանին մէջ բանտարկուած, մինչեւ իսկ իւր մարդկին օգնութեան կոչելու կարող չէր, որովհետեւ շչակը ձեռքէն ինկած էր։

Վերցնելու համար ծռիլ հարկ էր, և ժամացոյցին արկղին անձկութիւնը բացարձակապէս կ'արգիլէր իրեն շարժիլ։

Ինչպէս կրնայ մարդ ծունգը ծալել՝ երբոր փակուած լինի նեղ ու երկայն պատեանի մը մէջ, ուր շարժելու ազատութիւն չունենայ՝ ինչպէս դագաղի մէջ փակուած մարդ մը։

Իւր թոքերուն բոլոր ուժովը գոչելէ զատ ուրիշ միջոց չկար. ուստի չը վարանեցաւ ի գործ դնել՝ աչքն առնըլով իւր վրայ հրաւիրել ոճրագործին բարկութիւնն, որ անշուշտ զինեալ պատրաստ էր լինիլ, և կրնար ետ դառնալ և զինք լռեցնելու համար խողխողել։

Բայց մարդկային ձայնը շատ հեռուէն չլսուիր, մանաւանդ երբոր վարագոյրներով, տախտակորմերով և պատերով շրջափակեալ լինի։

(Շարունակելի)

կը դառնայ սկսաւ, և օդապարիկն ուղղուեցաւ դէպ ի նախապէս որոշեալ կէտ մը. իւր ընթացք, ի սկզբան դանդաղ, աստիճանաբար արագացաւ, և օդապարիկը Մէօտոնի անտառին վրայ նաւարկել սկսաւ։ Արևելեան թեթև հով մը կը փչէր. բայց օդապարիկն, որոշեալ տեղն հասնելու համար, օդին հակառակ ընթանալ սկսաւ, և յաջողապէս կատարեց դոյս շարժումս։ Երկու սայլք տարբեր պաշտօնեաներ կը կատարէին։ Մին ղեկը կը կառավարէր, միւսն օդապարիկը միշտ նոյն բարձրութեան մէջ կը պահէր։ Վիլլեթի վերև հասնելով, ղեկավարը դրօշ մը ծածանեց, նշան տալով թէ օդապարիկն ետ պիտի դառնար, որովհետև որոշեալ կէտին վրայ հասած էր։ Ցոյնժամ օդապարիկը նուաս մը ալս իր վրայ դարձաւ, չեզոքապէս դծելով իբր 300 մեդր շառաւիղով կէս—շրջանակ մը, և նորէն Մէօտոնի ճամբան բռնեց։ Հասնելով այն կէտի վրայ ուստից բարձրացած էր, օդապարիկն աստիճանաբար վար իջաւ, սլոյոյ մ'րրաւ, մեքենոյն ետ դարձուց, առաջ տարաւ, և ի վերջոյ իջաւ ճիշտ նոյն կէտին վրայ։ Հետևաբար, օգոս. 9ի օրը Փրանսական հանճարին մեծ օրերէն մին կը համարուի։ Արդէն օդապարիկն իր ծագմամբ և կրած զանազան բարեփոխմամբք Փրանսական հանճարին ծնունդն է։

ՖՐԱՆՍԻՕ–ՉԻՆԱԿԱՆ. Թուլոն, 18 օգոս. Չինաստանի հետ պատերազմի պատճառաւ, հրաման արուեցաւ հրաժեշտով բացակայ գտնուող բոլոր նաւային սպայից որ Թուլոն վերադառնան անմիջապէս։ — Ճէնէվր, 18 օգոս. Ըստ Նէյըր Հօլդենեան այսօր Թօնքին գնաց 1,500 զօրքով և պատերազմական մըթերքով։

ՄԵՔՍԻԿԱ. Մեքսիկայէ քաղուած հեռագրեր կը ծանուցանեն թէ Հանրապետութեան Նախագահ Կոնզալէս զօրավարն հրաժարած բռնել տուեր է Ռամիրէզ և Մէնա զօրավարներն և ուրիշ մի քանի անձեր՝ կառավարութեան դէմ դաւադրութիւն նիւթած լինելու պատճառաւ։

ՄԱՐԴԱԿԵՐՈՒԹԻՒՆ. Նէ-Եօրք, 17 օգոս. Պ. Կրիլլի ընկերաց մարդակերութեան լուրն հաստատելով, Ռօզըր կ'ըսէ թէ նաւորդներէն Տօրդ. Բալլի անձնասպան եղած էր, և իր ընկերք կերան իր միսը։

ՌՈՒՍՔ ԵՒ ՉԻՆԱՑԻՔ. Բէթըրսպուրկ, 16 օգոս. Արևելեան Հանդէս կ'իմացնէ թէ չինական կառավարութիւնն որոշած է քաղաքային վարչութիւն մուծանել յԱրևելեան Թուրքաստան և չինական դպրոցներու հաստատմամբ չինական իշխանութիւնը զօրացնել այն նահանգի մէջ զոր վերջերս Ռուսաց ձեռքէն ետ առաւ։ Ռուս թերթը կը յարէ թէ Արևելեան Թուրքաստանի փարչային երկու գաւառներու պիտի բաժնուի, որոց միոյն կեդրոն պիտի լինի Քեաշղար և միւսին՝ Աքսու։ Քեաշղար պիտի լինի չինական բանակետղ մը։ Չինական զօրաց թիւը պիտի աւելնայ, և նոր զինուք պիտի զինուին։

ՄԱՏԱԿԱՍԿԱՐ. Ըստ վերջին լրոյ, Միօ ծովակալը փոխադրական դժուարութեանց պատճառաւ յետաձգեր է իր յառաջխաղացութիւն Հովաներու վրայ, բայց այս օրերս շատ ջուր եկած լինելով, Փրանսացիք ի մօտոյ առաջ պիտի քալեն և յարձակողական սկսին։

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԵԼԵՒՄՈՒՏՔ. Փիլատելֆիա, 17 օգոս. Միացեալ Նահանգաց կեդրոնական կառավարութեան գանձուն մէջ մեծ քանակութեամբ պատրաստ դրամ կայ, և հետզհետէ կ'աւելնայ։ Կառավարութիւնը չգիտեր ի՛նչ պէտք է ընել դրամի այս առատութեան մէջ։ Ըստ առաջնոյն արժեթղթերը վճարելու և հրապարակէն վերցնելու դրութիւնն ի գործ պիտի դրուի։ Ուաշինկթընէ կը ծանուցուի թէ ելևմտից նախարարն ի մօտոյ հրաւէր պիտի կարդայ Միացեալ Նահանգաց արժեթղթերաց, որ 10 միլիոն տոլարի արժեթղթեր բերեն պաշտօնատունն և փոխարէն անոնց գինն ստանան։ Ոսկեդրամի քանակութիւնը կ'աճի տարուէ տարի։ Այժմ 117,000,000 տոլարի կը հասնի։

ՌՈՒՍՔ ԵՒ ԲՈԼՈՆԱՑԻՔ. Ժուռնալ տը Սէն-Բէթըրսպուրկ իր օգոս. 17 թուով պաշտօնական տեղեկութեանց համեմատ կը ծանուցանէ թէ Վարշաւայի յեղափոխական դաւադրութեան հետևանքն եղած է 32 անձանց ձերբակալումն, որոց 3ը միայն օրթոտոքս կրօնի են։ Մնացեալ 21ը կաթոլիկ են, 7ն հրեայ և 1ն այս կրօնից ո՛չ միոյն կը վերաբերի։ Զէնք և ուժանակ գտնուելուն զրոյցն անհիմն է։ Դաւադրաց վրայ յեղափոխական գրգռիչ գրուածներ միայն գտնուած են բստ սովորութեան։ — Ռուս թերթին դաւադրաց կրօնին նկատմամբ տուած տեղեկութեան նպատակն է ցոյց տալ թէ անոնց մեծամասնութիւնը բոլոնացի է և ո՛չ ռուս, ինչպէս սակայն կ'ըսուէր ի սկզբան։ Բայց Բոլոնացիք կը մերժեն ամեն դաւակցութիւն Ռուսաց հետ և կ'ըսեն թէ Ռուսիոյ դէմ թշնամական զգացումն այնչափ սաստիկ է երկրին մէջ որ ո՛չ մէկ Բոլոնացի կրնայ անդամակցիլ ռուսական ընկերութեան մը։ Բայց Բոլոնացիք ունին իրենց յատուկ յեղափոխական և ընկերվարական դաղտնի ընկերութիւններ։ Միևնոյն դաւադրութեան մէջ երկու սպրերէն ալ անուններու երևումը պարզ դիպուած մը կը համարուի։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱ. Նովօյէ Վրէմիա կը ծանուցանէ թէ Մոսքուայի վաճառականք յոյժ ուրախացան լսելով թէ կառավարութիւնն որոշած է Կասպից ծովէն անդին գտնուող երկաթուղին 137 մղոն ևս առաջ տանել մինչև Աշքապատ։ — Ռուսիոյ կայսերական Աշխարհագրական Ընկերութիւնն որոշած է գիտական հետազօտութիւն մը կատարել Մերվի շրջակայ երկրին մէջ։ — Չէրնայէֆ զօրավարն, որ այժմ ի Ճաքոն կը գտնուի, մինչև նոյեմ. հոն մնալու արտօնութիւն ստացաւ։ — Ռուս կառավարութիւնն որոշեց գիտնական յանձնաժողով մը ձեռամբ քննել թէ կարելի՞ է Կասպից ծովէն մինչև Քօնկրատ (Ամուու գետի վրայ) երկաթուղի մը շինել, ինչպէս կ'առաջարկէր Չէրնայէֆ զօրավարն, իբրև ազդու միջոց Կեդրոնական Ասիոյ հետ Ռուսիոյ հաղորդակցութիւններն արագացնելու։

« Ի ՇԱՀ ԳԻՏՈՒԹԵԱՆ ». Վարշաւայի Քուրիէր լրագիրը բաժանորդի մը նամակը կը հրատարակէ, որ իւր անձը կը նուիրէ Քոլերայի վերաբերեալ գիտական փորձի մը իբրև առարկայ։ Գիտուններ այժմ զբաղեալ են Քոլերային բնութիւնը քննելու, մանաւանդ միկրոբներն, և անոնց գործունէութիւնն ուսումնասիրելու համար, թանկագին փորձ մը կը լինէր կենդանի մարդու մը վրայ կատարուած փորձ մը։ Բայց յոյժ վտանգաւոր գործողութիւն մ'է այս, որովհետև փորձի առարկայ եղող անձը կրնայ մեռնիլ։ Նամակագիրը կ'ըսէ. «Ես կարգուած չեմ, ո՛չ ալ է ընտանեկան կապակցութիւն չունիմ, ո՛չ ալ ապագայի համար ծրագիր։ Կ'ուզեմ գոնէ մարդկութեան օգտակար լինել կրելով ի շահ գիտութեան որ և է փորձ, որ դեռ պիտի փորձուի մարդկային պատրաստի մը վրայ։ Վարձատրութիւն չեմ խնդրեր. միայն ճամբորդութեանս ծախքը պէտք է վճարուի, նաև՝ եթէ ողջ մնամ՝ վերադարձիս ծախքը։ 24 տարեկան եմ և քաջառողջ։» Նամակագիրը միանգամայն իր հասցէն կուտայ։ Տեսնենք թէ Պ. Քօխ կամ Պ. Բասդէօռ պիտի ուզէ՞ օգուտ քաղել այս ճշմարտապէս անձնուիրական առաջարկէ։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային վարչութեան Քաղաքական ժողովն այսօր Ղալաթիոյ խորհրդարանին մէջ նիստ կընէ։ Խառն ժողով պիտի գումարուէր այսօր, բայց յետաձգեցաւ՝ Երուսաղէմայ պարտուց խնդրոյն նախապատրաստութեանց չլրանալուն համար։

Բողոքական ազգայինք տակաւին լքեալ կը մնան առանց ազգապետի։ Բ. Դրնէն վաւերացեալ ազգային կնիքն ալ՝ որ հրաժարեալ ազգապետին գործակատար Սանիան էֆէնտիի քով կը գտնուէր, Իսկիւտարի վերջին հրդեհին ժամանակ այրեր է գործակատարին բնակած տան և կահկարասեաց հետ։ Հետևաբար յոյս կայ թէ կայսերական կառավարութիւնն այլ ևս կը կարգադրէ նոր ազգապետի մը ընտրութեան խնդիրն։

Ակերգէն կը գրեն, թէ Մէլիքեն գիւղացի Յակոբեան Սիմոն անուն անձն՝ ցորեն աղալու համար մերձակայ գիւղ մը գացած ժամանակ, ատաղձ մը Նոբա ուսանելի ուղեր է, և տեսնելով որ Սիմոն չհնազանդիր, զարկեր սպաններ և աւանակն առեր խոյս տուեր է։ Ակերգի Տէհ գիւղաքաղաքէն մեր ազգայնոց վրայ ալ՝ որ ցորեն աղալու համար դուրս ելած են եղեր, ուղևորից խումբ մը յարձակելով ուղեր են յափշտակել նոցա ցորենները. և որովհետև ընդդիմացեր են նոքա, ուսոյակը զարկեր սպաններ են Սողոմոնեան Ստեփան անուն պատանին, իսկ միւսները չարաչար վիրաւորեր են։

Տեղական իշխանութիւնք չարագործները ձերբակալելու հետամուտ են, և մեծ յոյս կայ, որ ի մօտոյ արդարութեան ձեռքն անցնելով անդգամներն, իրենց արժանաւոր պատիժը կը կրեն ի խրատ և յօրինակ այլոց։

Ուսումնական խորհրդոյ տրամասովոր նիստն տեղի ունեցաւ երէկ ի Ղալաթիա։

Խորհուրդն երկար խորհրդակցութիւն մ'ունեցաւ Կեդրոնական վարժարանի հաստատութեան խնդրոյն վրայ, Վարչութեան մատուցանելի տեղեկագիրն պատրաստեց և որոշեց որ իր անդամներէն Մեծ. Պէրպէրեան և Մելիքեան էֆէնտիներն վաղն անձամբ Քաղ. Ժողովոյ ներկայանալով խնդրոյն առիթողականութիւն տան։

Խորհուրդն յառաջիկայ հինգշաբթի սովորական նիստն պիտի կազմէ և պիտի զբաղի դպրոցական ծրագրով։

Օրթագիւղի Լուսաւորչեան վարժարանի տարեկան քննութեան հրաւիրեալ մեծարգոյ հանդիսականներէն մին մեզ գրած է մանրամասն տեղեկագիր մը յիշեալ դպրոցին աշակերտաց յառաջադիմութեան մասին, որոյ համար յատուկ շնորհակալութիւններ կը մատուցուի առ դպրոցի տնօրէնն Մեծ. Գաբրիէլ էֆէնտի Ներսէսեան, որ իր հմտութեան և փորձառութեան միացուցած լինելով անձանձիր աշխատութիւն մը, այնքան գեղեցիկ արդիւնքներ յառաջ կը բերէ։ Տեղեկագիրն կարող չեղանք հրատարակել ընդարձակութեան պատճառաւ։ Մեծ. հանդիսականք որ ի մասնաւորի գնահատող մ'է գծագրական ճիւղին, շատ գովեստիւ կը խօսի, ի մէջ այլոց, դպրոցի պատկերահանութեան ուսուցիչ Ց. Ճիվանեան էֆէնտիի վրայ։ Աշակերտք մեծ յառաջադիմութիւն ըրած են այդ կարևոր ճիւղի մէջ։ Ց. էֆ. Ճիվանեան իր դասերը կ'աւանդէ նոր եղանակներով և գծագրութիւնը կ'ուսուցանէ գեղեցիկ կերպով, միացնելով գործնականը եւ տեսականը միասին։

Նորին շնորհակալութիւններ կը յայտնուին դպրոցի պատուարժան հոգաբարձութեան որ ո՛ և է ջանք չէ խնայած դժուար պարագայից մէջ Լուսաւորչեան վարժարանը կատարելապէս բարեկարգ վիճակի մէջ պահելու, արժանի իր ի վաղուց անտի վայելած համբաւոյն։

Երէկ մայրաքաղաքս վերադարձաւ Մեծ. Հայկազն էֆէնտի Պէհեան՝ որ Բարիզի երկրագործական ազգային ճեմարանին մէջ իւր ուսումն աւարտած և վկայականն ստացած է, « երկրագործ—ճարտարապետ » (Ինժէնիէօռ Ակրօնօմ) տիտղոսով։ Լիայոյս եմք որ այս պատանին՝ երբ երկրին ամեն կարգի նիւթական հարստութիւններն արդիւնաւորելու մեծ հոգածութիւն կը տարուի, այսպիսի երիտասարդաց տաղանդն և ուսումն օգտակարապէս գործածուի։

Ի խնդրոյ Թաղական խորհրդոյ Գարակէօմրիւկի կը ծանուցանեմք՝ թէ Դեր. Տ. Նիկոլ Ս. Եպիսկոպոս Ապահունի, վաղը 16 օգոստոս, յատկապէս տիկնանց համար Ս. Պատարագ պիտի մատուցանէ յիշեալ թաղի Ս. Յովհան Ոսկեբերան Եկեղեցւոյ մէջ։

Մաքրի գիւղի Արծրունեան երկսեռ վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսը պիտի կատարուի գիւղին եկեղեցւոյն մէջ, առաջիկայ կիւրակէ, օգոստ. 19, ի ժամ 3։

Ազգային Ժողովոյ Թ րդ նիստն տեղի պիտի ունենայ ամսոյս 17 ին Ուրբաթ օրն ի Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ Ղալաթիոյ։

Ատենանը պիտի բացուի առաւօտեան ժամը 2 ին և դոցուի 5 ին։

Հրաւիրեալ են Ազգային Երեսփոխանք իրենց ազգասիրական պարտականութիւնը կատարելու փութալ։

Մնամ աղօթարար
Ի դիմաց Ս. Պատրիարքի Հօր
Փոխանորդ Նորին

14 Յուլիս 1884

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Ատենական գործողութիւնք.

Բ. Խնդիր Ս. Երուսաղէմայ պարտուց բարձման — Տեղեկագիր Վարչութեան (շարունակ.)։

Գ. Առաջարկութիւն Խառն Ժողովոյ Ազգ. Վարչութեան ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴՐՈՅ նկատմամբ։

Դ. Ընտրութիւն Ելմտական Յանձնաժողովոյ.

Ե. Ընտրութիւն Դ րդ Ատենադպրի Մայր Դիւանի։

Ատենադպիր
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՐՇԱԿՈՒՆԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Դարատաղի սահմանաց ուղղութեան յանձնաժողովոյ Փրանսերէնի քարտուղար կարգեցաւ՝ Հիւպատոսութեանց տնօրէնութեան դիւանի անդամներէն Ճաֆեր պէյ։

Մայրաքաղաքիս պելճիական դեսպանն երէկ Բ. Դուռն երթալով տեսնուեցաւ արտաքին գործոց նախարար Ասիմ փաշայի հետ։

Աւստրիոյ կայսրն Երկաթի Թագի պատուանշան ընծայեց՝ Օգոստ. Սուլթանի թիկնապահապետ Մէհմէտ փաշայի։

Պարսկական դեսպան Մօհսին խան նախընթաց օրը Պոլիս Նշանճը պարսկական վարժարանն երթալով՝ Նախագահեց ուսանողաց պարգևաբաշխութեան հանդէսին։

Օգոստ. Սուլթանը՝ զինուորական պաշտօնատան առողջապահական ժողովոյ առաջին ճիւղի տնօրէն Միրլիվա Հասիպ փաշայի նուիրեց՝ մօտերս վախճանեալ Տօքթօր Ալթմանս պէյի ի Գումգափու ունեցած քարուկիր և հոյակապ տունն, որ ժառանգ մնացեր է՝ Ալթմանս պէյի անժառանգ լինելուն համար։

Արհեստական նորահաստատ սենեակի անդամոց անուններն հրատարակեցինք անցեալ շաբթու։ Ի վերջոյ տեղեկութիւն առինք, թէ նոյն սենեկի անդամոց մէջ կը գտնուին Դաւաֆեան Յովսէփ էֆէնտի, Խորասանճեան էֆ. Ջօղանեան էֆ. Արշակունի Յովհաննէս էֆ. և Պօղոս էֆ.

Ցայտնի է թէ գերմանական կառավարութիւնն, Անգլիոյ, Ֆրանսայի, Իտալիոյ և Աւստրիոյ նման նաւատորմ չունի Միջերկրական ծովու մէջ, այլ փոքր մարտանաւ մը միայն՝ որ իբր գերմանական դեսպանատան պահակ շոգենաւ, Վոսփորի մէջ կը կենայ։ Պերլինի Բէրզէն—Ցայթունկ լրագիրը կ'ըսէ թէ վերջերս գերմանական կառավարութիւնն հարկ դատած է մերթ ընդ մերթ Միջերկրական ղրկել Գերմանիոյ արտաքին աշխարհակալութեան պիտոյից համապատասխանելու չափ զօրաւոր նաւատորմ մը։ Այս նաւատորմն որ Հօլանտերի մէջ պիտի գայ, պիտի բաղկանայ 3 զրահաւորներէ, կամաւոր են 4 տարուան ծառայութեան պայմանաւ։ Նաւատորմի հրամանատարութիւնն պիտի յանձնուի հաւանականաբար Սթիւպէրաուխ նաւապետին։

Թարիք կը գրէ, թէ արտաքին գործոց նախարարի խորհրդական Յասեան էֆէնտի քանի մ'օրէ հետէ պաշտօնատեղին բացակայ կը գտնուի։

Երրորդ կարգի Օսմանիյէ պատուանշան տրուեցաւ Վէհ. Սուլթանին Նիկոմիդիոյ ագարակաց յանձնաժողովոյ անդամ Պ. Հանճէնի։

Պ. Ժ. Կերոֆ, որ Պուլկարիոյ Նախկին նախարարութեան կողմէ մայրաքաղաքիս Պուլկարական գործակատար անուանուած էր, յետս կոչուած է Պուլկարիոյ իշխանին հրամանաւ։ Արդի Նախարարութեան բերան Սրէտէձ լրագիրը կը ծանուցանէ թէ Սոֆիայի կառավարութիւնն այս պաշտօնին համար Բ. Դրան ընտրելի առաջարկած է Պ. Վուլքովիչ։

Անցեալները գրեցինք թէ Րէժիի ընկերութիւնն և Հանրային պարտուց վարչութիւնը Կայս. կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրած էին հետևեալ պարագային վրայ։ Որովհետև Եգիպտոսի և Յունաստանի միջև կնքեալ պայմանագրի համաձայն, Յունաստանի ծխախոտք Եգիպտոս կը ղրկուին օխա գլուխ միմիայն 3 դրուշ տուրք մը վճարելով, մինչդեռ Թուրքիոյ ծխախոտք, 15 դրուշ կը վճարեն, որոց 10 ն բէֆթէէ անուամբ, յունական ծխախոտն շատ աւելի սուտաւ քանակութեամբ կըսպառի և Թուրքիոյ Րէժին 120,000 ոսկւոյ վնաս մ'ունի այս պատճառաւ։ Բ. Դուռը ցարդ պատասխանած չլինելով երկու վարչութեանց, Րէժիի տնօրէնութիւնը կրկին խնդրեց կառավարութենէն որպէս զի համաձայնութիւն մը գոյացնեն իրենց համերաշխ շահուց պաշտպանութեան համար։ Հանրային պարտուց վարչական խորհուրդն ևս իր վերջին նիստին մէջ որոշած է Րէժիի ընթացքին հետևիլ, և հրահանգ տուած է կայսերական Դոմիսէրին՝ հաղորդել իր խնդիրը Բ. Դրան։

Մօնիթէօռ կիմանայ թէ Բեղրսպուրկի Օսմանեան դեսպանատան երկրորդ քարտուղար Իհսան պէյ Տփղիսի ընդհանուր հիւպատոս պիտի անուանուի։

Նախընթաց թուով մը գրեցինք թէ դատական նախարարութիւնն առաջարկած է Բ. Դրան, վերաքննիչ ատենի վրայ երեք նոր անդամներ յաւելուլ։ Այս առաջարկն ընդունելութիւն գտած լինելով Մեծ Եպարքոսին կողմէ, դատական նախարարութիւնը Ն. Բարձրութեան ներկայած է այդ պաշտօնին յարմար երեք դատաւորաց անունքն, և կայսերական վաւերացման կսպասուի։

Երէկ ծանուցուեցաւ թէ նախարարաց խորհուրդն 300,000 Օսմ. ոսկւոյ գումար մը յատկացուցած է հեռագրական վարչութեան գործարանին ընդարձակման համար։ Այդ գործարանը որ հեռագրական վարչութեան մէկ փոքր ճիւղն է, կրէ Էկրքէս, և կատարելապէս կը բաւէ անոր պիտոյից, տարեկան հազիւ 2,000 ոսկի ծախք ունի, հետևաբար պէտք չունի 300,000 ոսկւոյ նպաստի մը։ Այս գումար յատկացեալ է, բստ մեզ, Օսմանեան ընդծովեայ հեռագրական դիծերու աւարտման։

Անկլօ-Փրանսական թերթը կը յարէ թէ Օսմանեան հեռագրութեան և «Իսթէրն Թէլէկրաֆ Քոմփէնի» ի վարչութեանց միջև կանխաւ կարգադրուած պայմանաց համաձայն, այս վերջինն պիտի տրուի ցամաքային դըլխաւոր գծերն Արաբիոյ և Ափրիկեան գաւառաց միացնող ընդծովեայ պարանոց արտօնութիւնն. այս գիծերը պիտի միացնեն նաև Արշիպեղագոսի կղզիները։ Եթէ Բ. Դուռը կարենայ յիշեալ ընկերութեան յատկացեալ տարեկան գումարի վճարումն ապահովել, արդելք մը չմնար պայմանագրի գործադրութեան դէմ, որով կարող կը լինի Օսմանեան ընդարձակ կայսրութեան ո՛ և է անկիւնէն լուրեր առնուլ արագապէս։

Էքսբրէս, վերջին ժամանակներս Կ. Պոլսոյ հրապարակին վրայ տեղի ունեցած սնանկութեանց վրայ խօսելով, կը յիշատակէ թէ տարազագործութեան (մանիֆաթուրա) երեք փոքր վաճառատունք ևս իրենց վճարքը դադրեցուցեր են այս օրերս, և դիտել կուտայ թէ այս սնանկութիւնք ո՛չ թէ ձախորդ շահադիտութեանց արդիւնք են, այլ տեղական վաճառականութեան անկման նշան մ'։ Ասոնց բուն պատճառը դաւառաց աղքատանալն է, կ'ըսէ, որք իրենց պարտքերը վճարելու անկարող կը գտնուին և ասով Ներքին առևտուրը կ'անդամալուծի։ Այս վիճակին ո՛չ նուազ տեղի տուած են թղթադրամի և պղնձ դրամոց ջնջումը, և խառն դրամոց արժէքին հետզհետէ նուազիլը, և պատերազմի պատճառած բոլոր վնասը ժողովրդեան վրայ ծանրարեռնիլը։

Այս կերպով երբ երկրին դրամագլուխը մէկ կողմէ կը նուազէր, միւս կողմէ հարկ կը լինէր նորանոր տուրքեր յաւելուլ բացը գոցելու համար, բայց այսպիսի միջոցներ կրնային գիւտնագիտական դժուարութեանց պատճառել, հետևաբար չընդունեցան։ Այժմ կառավարութիւնը կը խորհի անուղղակի տուրքերն յաւելուլ, և հանրային կրթութեան գործին միում մի տալ նոր տուրքեր աւելցնելով։ Անշուշտ կառավարական դանձուն պէտքերն զգալի կը պահանջեն, կ'ըսէ, բայց մօտ է այն ժամանակն ուր ժողովրդեան պիտոյքն աւելի ծանրակշիռ խնդիր մի երևան պիտի բերեն։ Կառավարական դանձուն նեղութեան հիմն այն է որ ժողովուրդը իր տուրքերը վճարելու կարող լինի, բայց դժբաղդաբար այս հնարաւորութիւնն հետզհետէ կը դժուարանայ։

Երէկ հրատարակած էինք Թէրճէմանի-Հագիգաթի սա՛ լուրը, թէ Հավալէի համար դրամ չվճարելու հրամանը դաւառները հասնելէն յետոյ՝ ի Բարբերդ Հավալէի դրամ վճարուեր է յանուն Պիլպէնկեանի։ Այսօր հարկ կը համարիմք յաւելուլ յիշեալ նահանգի պաշտօնական լրագրոյ հետևեալ ծանօթութիւնը։

«Կուսակալն սուգելով որ համարակալութեան դիւանն յանուն Պիլպէնկեանի 29 հազար այպաչի ղրուշի Հավալէի գործողութիւն կատարած է՝ Հավալէի համար դրամ չվճարելու հրամանէն յետոյ, անմիջապէս կնքել տուաւ կեդրոնական սնտուկն, և խմանալով որ Գույումճեանի Հավալէէն ալ 7,000 այպաչի ղրուշի և այլոց համար գործողութիւնք կատարուած են համարակալութեան քարտուղարներէն Նըշան էֆէնտիի ձեռօք, և համարակալութեան Իմիւրախաքերուն վրայ ալ տրամանչանէն 700 փլէ արմտիք հանուած է, Նշան էֆէնտի հարցաքննութեան ենթարկուելով՝ խոստովանեցաւ, և որովհետև յայտարարեց թէ 7,000 այպաչի ղրուշը համարակալ Շաքիր էֆէնտիի տուած է, նա ալ կոչուեցաւ, բայց ուրացաւ, և հաստատուելով որ Նշան էֆէնտիի ձեռօք հանուած է արմտիքն, որոշուեցաւ պաշտօնանկ ընել զնա (Նշան էֆէնտին) և բանտարկել ու առնուլ յիշեալ արմտեաց գինն եղող 27,000 այպաչի ղրուշն։ Համարակալութեան Միւմէյիզ Հիւսնի էֆէնտի ալ պաշտօնանկ եղաւ նմանօրինակ վարմանց պատճառաւ։»

Թէրճէմանը Հագիգաթ այսօր իւրոյ կը ծանուցանէ թէ, Ափրիկեան-Տրիպոլիս ուղևորող Ճանիկ անուն շոգենաւուն մէջ 20ի չափ ռմբագործք, որ Իզմիրէն յանձնուած էին յիշեալ նահանգը տանելու համար, ուղևորաց վրայ յարձակելով՝ անոնցմէ մէկ քանին վիրաւորեր են, և շոգենաւն Մալթա հասնելուն պէս դադար առեր և ի Պոլիս հեռագրեր է տեղի ունեցած անցքն։

Կրետէի ազգային ժողովք միլիոն մը ղրուշ յատկացուցեր է՝ վարժարանաց համար։ Ազգային ժողովն ի մօտոյ քննութեան պիտի ենթարկէ՝ հիւանդանոցներ հաստատելու առաջարկութիւնն որ ալ դրը մատուցած է կառավարութիւնը։

Պետական խորհրդոյ դատական ճիւղին Նախագահ Սաֆիպ պէյ՝ օդափոխութեան համար ագարակը դնաց, և ի բացակայութեան Նորին պիտի փոխանորդէ խորհրդոյն անդամներէն Իզզէտտին պէյ։

Քաղաքապետութեան պաշտօնակալք Նախընթաց օրը Սիրքէճի-Իսկէլէսիի կողմը Նպարավաճառի մը խանութէն 100 տակառի չափ աղած ձուկ ծովը թափեցին, հոտած լինելուն համար։

Ըստ կարգադրութեան Թղթատարական վարչութեան, այսուհետև սուրհանդակ մը պիտի երթևեկէ Սերաստիայէն Գարահիսար, Նամակներէ զատ՝ ամեն տեսակ աւանդ և օրինակ ընդունելով։

Կրթական պաշտօնատունն հրահանգ տուած է գաւառաց կրթական տեսչաց, որ ի հաշիւ կրթական տրոց՝ առնուած արմտիքն առնուն շտեմարանէն։

Արհեստից և երկրագործութեան յանձնաժողովն՝ որ ընդ նախագահութեամբ երկաթուղեաց տնօրէն Խայրի պէյի, երէկ չորրորդ նիստն բրաւ արհեստական վարժարանին մէջ։

Հեռագրութեան և Թղթատարութեան վերատեսչութիւնը կը ծանուցանէ, թէ ինչպէս Արևելեան-Րումէլիի, Փիլիպէի և Գարճա-ալիի հեռագրական կայարաններէն, նոյնպէս և Թաթար-Պազարճըգի, Գրզանլըգի, Պէրգօսի, Եանպօլիի, Խասքէօյի, Եսկի-Զաղրայի, Այտօսի և Իսլիմիայի կայարաններէն թուրքերէն լեզուաւ հեռագրական հաղորդակցութիւն պիտի լինի այսուհետև, բստ ներքին կանոնաց և սակագնաց նահանգին։

Խոյրնէի կուսակալութենէն առ ներքին գործոց նախարարութիւնն ուղղուած հեռագիր մը կիմացուի, թէ Ռոստոզայի անգլիական հիւպատոսին որդին լեռը հանող աւազակները ձերբակալելու համար մեծ փոյթ կը տանին տեղական իշխանութիւնք, և արդէն ձերբակալեալ են քանի մը կասկածելի անձինք։

Ներքին գործոց Նախարարութեան հրամանաւ, բժշկական վարժարանէն Մարմարա ղրկուած բժիշկք վերադարձան, կատարելով իրենց պաշտօնը՝ որ է տեղւոյն աղետալի հրդեհի ժամանակ վիրաւորուող և հիւանդացեալ թշուառաց դարման տանիլ։ Սոյն տեղեկագրեն կիմացուի, թէ հրդեհին զոհ գացած է միայն 75 տարեկան կին մը։

Հաչակաւոր անկարգ Իլիաս փաշայի ընտանիքն Պէյպէքի պարտիզէն կառքով դարձած ատեն, կրտսեր որդին կառքէն իյնալով՝ անուոց ներքև մնացեր և թեթև վիրաւորուեր է։

Եէնի գիւղ բաւական նշանաւոր ընտանիքէ մէկը, Նուվախիտա, քոյրը թեւն առած Պէյլիւքաւէրէ շրջագայած ժամանակ, պատահելով մէկ ընկերին՝ որ քանի մ'օր յառաջ ալ ինքն անհաճոյ թուղթ մը գրած է եղեր, քոյրը թէեն թողեր, և առ ընկերն յառաջանալով ա՛ռ թղթին պատասխանն բսեր ու ապտակ մ'իջուցեր է առաջի բաղմութեան։ Ցայտնի չէ, թէ ապտակեալն ի՛նչ գրած էր և ի՛նչ ընթացք պիտի բռնէ այժմ։

Խարբէռի մէջ «Ֆլիւպ տ'Անդրինօբլ» անուամբ Ֆլիւպ մը բացուած է, որ ամեն ազգի երևելի և պատուաւոր ընտանիքներէ 60էն աւելի բաժանորդներ ունի։ Զբօսարանք, ընթերցարանք և պարասրահք կը բաղկանայ. ամեն գիշեր բաց պիտի լինի։ Ձմեռը տրուելիք քանի մը պարահանդէսներն՝ բաժանորդաց կողմէ վճարուած տարեկան բաժանորդագնոց փոխարէնը պիտի լինին։

Պրուսայէն կը գրեն թէ հաշուակալ Միւհէնտիսին էֆէնտիի և ընկերաց հարցաքննութիւնն աւարտած լինելով, Հաւալէներու խնդիրն յանձնուեր է ընդհ. դատախազին՝ ամբաստանագիրը պատրաստելու համար։ Կեդրոնական կառավարիչ Հայտար փաշայի հարցաքննութիւնն ևս աւարտած լինելով, տեղեկագիրը ղրկուեր է Պետական խորհրդոյ դատական ճիւղին, որոյ առջև պիտի կոչուի ամբաստանեալն։ Ելմտական նախարարութեան վերին յանձնաժողովը ջնջուած լինելով վերջին օրերս, Նէճիպ պէյ որ իբր այդ յանձնաժողովոյ անդամ, Պրուսա գնացած էր հարցաքննութեանց ներկայ գտնուելու, մայրաքաղաքս վերադարձաւ։

Ռուսական մարտանաւ մը Պիրէօսէն մայրաքաղաքս եկաւ երէկ։ 6 սպայ, 55 նաւաստի և 4 թնդանօթ ունի։

Երէկ Ղալաթիոյ կողման հանրակառքն Պէշիկթաշ գացած ատեն, կայսերական խոհարանին առջև յարդաբարձ մարդ մը կը տեսնուի գծին վրայ. կառքին առաջնորդը կը վազէ կը դրկէ զանի, բայց ճանապարհէն դուրս հանած ժամանակ երկուքն ալ կիյնան, և բեռնաւորն գլխէն ու թևէն կը վիրաւորուի։

Երկար ժամանակ Միզանի մէջ և այլուր կառավարչի պաշտօն վարող Աքիֆ պէյ մեռեր է 73 տարեկան։

Բարձրագոյն հրամանաւ, 114 հոգի աւելցեր է Պրուսայի ոստիկանաց վրայ, Նահանգը լեռներով ու անտառներով շրջապատեալ, և սեփական քանի մը նահանգաց ճանապարհը լինելուն պատճառաւ։

Շաբաթ, կէս օրին, մանկամարդ օրիորդ մը մօրը թևը մտած, Թէքէ-Պաշըի թաղապետական պարտիզին մօտէն անցած պահուն, մարդ մը՝ դաշոյն ի ձեռին՝ անոնց մօտենալով, մօրը կսպառնայ զարնել եթէ ընդդիմութիւն մ'ընէ, և աղջիկն յափշտակելով կառնէ կը տանի։ Քանի մ'անցորդք մօրն աղաղակները լսելով՝ կը մտնեն և կիմանան որ առևանգողն անպատասխանի մէկն է եղեր որ քանիցս իր աղջիկն ամուսնութեան խնդրած էր, և չյաջողելով առնուլ, այս միջոցին դիմեր է։ Բայց կերևի թէ աղջիկն ալ սոսնց ընդդիմութեան հետևեր է իր առևանգողին և երկուքը մէկտեղ աներևոյթ եղեր են։

Մոնիթէօռ կը պատմէ թէ Գոնեայի Նէվ-Շէհիր գաւառակին Գայմագամին և հաշուակալ Նայիմ էֆէնտիի միջեւ վէճ մը ծագեր է։ Նայիմ էֆէնտի իւր պաշտօնատան հաշուեկշիռներն ամեն ամիս Նիկտէի հաշուակալութեան դիւանին կը ղրկէր, որոյ իշխանութեան ներքեւ կը գտնուի. Գայմագամը պահանջեր է որ այդ հաշուեկշիռք իւր միջոցաւ հաղորդուին, և Նայիմ էֆ. ընդդիմացեր է։ Ասոր վրայ Գայմագամը Գոնեայի կուսակալին բողոքեր է որ յայտներ է թէ արդարացի է այս բողոքն, ըստ որում Նայիմ էֆէնտի կանոնավանց գտնուած է մի միայն այն պատճառաւ որ Նիկտէի Գայմագամը հաշուակալութենէ բնաւ տեղեակ չէր։ Գայմագամին անձնասիրութիւնը վիրաւորելով այս պատասխանէն, վարչական խորհրդոյ հետ միաբանութեամբ, Նայիմ էֆէնտիի պաշտօնանկութիւնը խնդրեր են հեռագրաւ։

Սօֆիայէն կը գրեն թէ Ուէմէն-Նիշի երկաթուղւոյ բացումը պիտի կատարուի սեպտեմբեր 1ին, և Նիշէն ի Վրանիա երկաթուղւոյ գիծը պիտի աւարտի մօտ ժամանակէն։ Ժողովուրդը կառախումբերը կը դիմաւորէ խնդութեան աղաղակներով։ Ամեն ուրեք գործունէութիւն մը կը տիրէ և տեղացիք կը պատրաստուին փայտ, ածուխ, արջառ, գինի և սոխեր դուրս հանել երկրէն, նորահաստատ երկաթուղիով։ Անգամ մը որ այս գլխաւոր գիծն աւարտի, հետզհետէ ուրիշ կարեւոր գծեր պիտի շինուին օսմանեան և սերպիական երկաթուղեաց միջեւ հաղորդակցութիւն հաստատելու համար, Սօֆիայի ճամբով։

Ուրբաթ օր Աք-սէրայի կողմը իւր երկու ընկերաց ձեռամբ վատաբար վիրաւորեալ Թուրք երիտասարդը մեռեր է շաբաթ երեկոյ։ Պոլսոյ ոստիկանութիւնն յաջողեր է ձերբակալել սպանիչներէն մին։

Շաբաթ առաւօտ Բէժիի քննիչք Գարթալի հազարապետին և ոստիկանաց հետ Թուզլա գիւղը կոխելով, 500 օխա փախցուած ծխախոտ գտեր են։

Եանեայի կուսակալը հեռագրած է Բ. Դրան թէ աւազակութիւնք բոլորովին դադրած են Եպիրոսի ամեն կողմերն, և թէ հանրային ապահովութիւնը լաւ վիճակի մէջ է։ Կուսակալը կը յայտնէ թէ Զամլըգի կողմերն շրջագայելով խումբ մը զօրաց հետ, յաջողած է բռնել բոլոր չարագործներն։

Ռեյուշ կոչուած աւազակախմբին հրոսակաւոր պետը փորձեր է ծովէն Գորֆու անցնիլ, բայց Կումէնիձայի Օսմ. զօրաց հանդիպելով, դիմադրեր՝ և սպանուեր է մէկ ընկերին հետ։

Կ. Պոլսոյ արհեստական իգական վարժարանի պարգեւաբաշխութեան հանդէսը պիտի կատարուի վաղը։

Սօֆիայէն կը ծանուցանեն թէ Պուլկար ոստիկանութիւնն յաջողեր է ձերբակալել Պելովայի անտառին անօրէն Պ. Պրինտէրը լեռը տանող ամբողջ աւազակախումբն։

Հելլենական կառավարութիւնն անցեալները Աթէնքի համալսարանի ուսուցիչներէն մին Կիպրոս ղրկած էր, քննելու համար թէ կղզւոյն այգիներն աւերող հիւանդութիւնն ինչ էր, գիտնական ուսուցիչը տեղեկագրով մը յայտնած լինելով թէ որթաձաձ (ֆիլօքսերա) չէ այն, Թուրքիայէն Յունաստան ղրկուած պտղոց և տնկոց համար դրուած արգելքը վերցաւ։

Պօսնիոյ ծխախոտի շահագործումը որ մինչեւ ցարդ տեղի կունենար Հունգարիոյ Քրէտի-Ժէնէրալ դրամատան միջոցաւ, Վիէննայի Ունիօն Պանք դրամատան անցեր է, որ այս նպատակաւ պայմանագրութիւն մը կնքեր է Պօսնիոյ և Հէրսէքի հետ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

ՔՈԼԵՐԱ

Հռովմ, 26 օգոստոս

Քոլերան թեթեւապէս աւելցած է Իտալիոյ հիւսիսային կողմը, մանաւանդ ի Սբէձձիա։

Մարսիլիա, 26 օգոստ. եր.

Այսօր 6 հոգի մեռան քոլերայէն։

Թուլոն, 26 օգոստ. եր.

Այսօր 3 հոգի մեռան քոլերայէն։

ԴՐԱՄԱԿԱՆ

Յունաց Աստուածածնայ տօն լինելուն, Պորսան գոց է։

ԳԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Գալաթիա, 15 Օգոստոս

ԸՆԹԱՑՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՑ

3 ամիս Լոնտրայի վրայ	(պահքայի)	110 1/8
3 » »	(վճռելին)	109 3/4
3 » Բարիզի »	(պահքայի)	22 95
3 » »	(վճռելին)	23 2 1/2

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

Օսմանեան Քօնսօլիտէ

Երէկ երեկոյ գոցուեցաւ	գ.հկն.	—
Գօրայլին գոցուելէն վերջը	»	—
Երէկ Բերայի մէջ	»	8 38
Առաւօտուն բացուեցաւ	»	—
Բարձրագոյն գին	»	—
Նուազագոյն	»	—
Կէս օրին	»	—
Իւնիֆիէ Եգիպտական		—
Երէկ իրիկուն գոցուեցաւ		67 7 1/2
Բերայի մէջ		—
Այս առտու բացուեցաւ		—
Կէս օրին		—
փոխառութիւն 1863	Ֆր.	60
» 1865	»	52
» 1869	»	46
» 1873	»	41 50
Պօն տիւ Թրէզօր	Անգլ. Լր	17 75
Ռումէլիի երկաթուղի	Ֆր.	44 75
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	»	370
Բաժնեթուղթ Լաւրիօնի	»	82

ԲԱԺՆԵՏՈՄՍՔ

Սօսիէթէ Ժէնէրալ	Անգլ. Լր.	3 27
Քրէտի Ժէնէրալ (Գ. Կ.)	Օսմ. Լր.	6 30
[illegible]	»	5 30
Սօս. Շանժ է վալէօր	Օսմ. Լր.	3 28
Թրամուէյ	» »	297 1/2

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	87 27
Անգլիական ոսկի	»	110 10
Բոլ իմփէրիալ	»	90 6
Քրիմեց	»	51 15
Ռուսլի թղթադրամ	»	8 98
» արծաթ	»	89 30
Ֆիօրին	»	9 2
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 6
Վեցնոց	»	102 35
Հինգնոց	»	102 30
Մէթալիք	»	99
Պղինձ	»	800
Թղթադրամ	»	2800

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Լոնտոն, 26 Օգոստոս ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ գոցուեցաւ	100 7/18
Օսմ. բացուեցաւ	8 1/16
» » գոցուեցաւ	8 1/8
Օսմ. փոխառութիւն 1865	10 1/2
» » 1869	9 1/2
» » 1871	67
» » 1872	18
» » 1873	8 3/8
փոխառութիւն 1877	79
Պանք Օթօման	13 3/8
Ռուսական փոխառ. 73 (գ. կ.)	91 1/2
Եգիպտական միացեալ (ինիֆիէ)	60 1/4
» առանձն. (բրիվիլէճիէ)	83 1/4
Տայրա Սանիէ	58 3/4
Տօմանիալ (փոխառ. Ռօչիլտ)	81 1/2
Հունգարական պարտաթուղթ 1877	101 3/4
փոխանակութիւն Բարիզի վրայ	—

Վիեննա, 26 Օգոստոս ժամ 4 երեկոյ

փոխանակութիւն Լոնտոնի վրայ	121 80
Օսմանեան երկաթուղի	21 10

Բարիզ, 26 Օգոստոս ժամ 3 վայր. 65 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 1/2 0/0 բաց	107 67 1/2
» » 3 0/0 բաց	77 82 1/2
Օսմանեան քօնսօլիտէ բանուեցաւ	8 17 1/2
» գոցու. (գ. կ.)	8 17 1/2
Օսմանեան փոխառութիւն 1863	—
» » 1865	51
» » 1869	47
» » 1873	41
Օսմանեան երկաթուղի	44 37 1/2
» Բէժիի բաժնեթուղթք	520
Պանք Օթօման	585
Գրէտի Լիոնէ	552 50
» Ֆօնսիէ	1277 50
Բաժնետոմս Լեոնի (գուբ. կոր.)	1235
Սուէզի ջրանցք	1932 50
Ռուսական 5 0/0 1877ի	57 1/2
Իտալական Ռանթ (բարձրացած)	95 95
Արեւելեան Ռուս. (Ռիւս Օրիան.)	—
Եգիպտական միացեալ գոց	303 75
Սպանիական (արտաքին)	59 5/8
Բրիօրիթէ Թիւրք	370
5 0/0 Հելլենական	348 75
Չէք Լոնտրայի վրայ	25 18

ՌՈՒՍԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ռուսիոյ վերջին Սուրհանդակով եկած հայ լրագրերէ քաղուած.

Ազգային լուսաւորութեան Նախարարը ուսումնական շրջանների հոգաբարձուներին մի շրջաբերական է ուղարկել որոյ մէջ յոյս է տածում, որ ուսումնարանների ներկայացուցիչները առանձին խնամք ուշադրութիւն կը դարձնեն եկեղեցական-ծխական դպրոցների վրայ։ Պ. Նախարարը յիշեցնում է հոգաբարձուներին, որ դպրոցը եկեղեցւոյ դաշնակիցն է. այդ պատճառաւ ամեն ոք, որ կոչուած է լուսաւորութեան վսեմ գործոյն ծառայելու՝ դպրոցի առաջին բարեացակամը և սերտ բարեկամը պիտի լինի։ Պէտք է միշտ և հանապազ աչքի առաջ ունենալ, որ ցարդ եղած և այսուհետեւ լինելիք եկեղեցական-ծխական դպրոցները ձկտելու են նոր սերունդը կրթելու հաւատոյ անդրդուելի հիմանց՝ եւ և հայրենիքին ու գահին հաւատարմութեամբ ծառայելու վրայ։ Թագաւոր Կայսրը, որին ռուսաց Ս. Սինոդի օբեր-պրոկուրորը ներկայացրել էր եկեղեցական-ծխական դպրոցների գործը, բարեհաճեց այսպէս մակագրել. «Յոյս ունիմ, որ ծխատէր հոգեւորականութիւնը այս բարձր գործումը իւրան վայելուչ և արժանաւոր դերը կը բռնէ»։

Բաթումից եկող և գործոյն ի մօտոյ ծանօթ մարդիկ պատմում են, որ դատարանի վճռով քաղաքի հօղերից շատերը պէտք է վերադարձնուին իրանց նախկին տէրերին։ Տեղերի վրայ արդէն մեծ ու փոքր շինութիւնք կան։ Պատերազմից յետոյ քաղաքը, առանց պաշտօնաւոր ստուգման, այդ տեղերը վաճառեց, իսկ այժմ ինչ անելը չէ իմանում։ Մի մեծ ցաւն էլ այն է, որ հօղատէրերը անպատճառ իրանց հօղն են ուզում, այլ ոչ թէ որ և է վարձատրութիւն։

Գերմանիայից մեզ հաղորդում են, որ Կոմս Լորիս-Մելիքեանը այժմ գտնվում է Վիսբադէնում, ուր Նրան այցելութիւն են արել Բավարիոյ թագաւորը և Հեսսէնի մեծ դուքսը, որոնք և երկար մնացել են կոմսի մօտ։

Ի յիշատակ գահաժառանգի չափահասութեանը, Պետերբուրգի քաղաքային խորհրդարանը տարեկան 25,000 ռուբլի է յատկացրել 7-ից 12 տարեկան, երկու սեռի, որբ և անխնամ մանկանց համար ապաստանարան հիմնելու։

Յայտնի է, որ չայը և երշիկը արճճեայ թիթեղների մէջ են փաթաթում։ Գիտնական հետազօտութիւնքը այժմ ապացուցին, որ դա միանգամայն վնասակար է, ուստի—ասում է ռուս «Արձագանք» Թերթը—[illegible] բած չայի և երշիկի այդ փաթոյթները արգիլել։

«Նովոյէ Օբոզրէնիէ» Թերթը լսել է, որ ամսոյս 19ին, երբ Միքայէլեան կամրջի տակ մի քանի մարդիկ լողանալիս են եղել, փողոցի ոստիկանը հրամայել է գետից դուրս գալ։ Լողացողները չեն լսել, ուստի ոստիկանը վեր է առել մի քար և դրանց մէկին խփել, որ և վիրաւորուել է։

Դրեթէ օր չէ անցնում, որ Կուր գետումը մի մարդ չը խեղդուի։

—Արդեօք ինչ բանի համար է Միքայէլեան կամրջին կպցրած այն տախտակը, որոյ վրայ գրած են այս խոշոր բառերն «ազատիչ նաւակ»։

Բագուայ նաւթը Գերմանիա կրելու համար Բերլինում մի ռուս-գերմանական ընկերութիւն է կազմուել։ Ընկերութիւնը նոր ձեւի շոգենաւեր է շինել, որոյ ամեն մէկի մէջ 12,000 լիտր նաւթ է մտնում։

Բագուայ նաւթի մնացորդներից լուսաւորութեան մի նոր տեսակ նիւթ են պատրաստում, որ կոչվում է պիրօնաֆթ։ Դրա լաւ յատկութիւններից մինն էլ այն է, որ հէնց որ վրան ջուր ածես, իսկոյն կը հանգչի, մինչդեռ, յայտնի է, որ նաւթը ջրից կը բորբոքուի։

«Կարս» լրագրի ասութեամբ՝ Կարսի նահանգում երեւան է եկել հացի բզէզը, որ, ինչպէս յայտնի է, մեծ վնաս է տալիս հացաբոյսերին։

Խօլերայի երկիւղից շատ մարդիկ Ռուսաստանում, շտապում են իրանց կեանքը ապահովացնել։ «Նօվօյէ Վրեմիայի» ասութեամբ՝ «Ռոսսիա» անուանով ապահովիչ ընկերութեանը արդէն դիմել են 362 անձինք իւրեանց անձը ապահովացնելու։ Դրանց ապահովութեան գումարը 1,306,900 ռուբլու է հասնում։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

«ԱՐԵՒԵԼՔ» Ի

Վան, 31 յուլիս 1874

Թէեւ յայտնի է Վասպուրականի հանքային հարստութիւնը, սակայն նոյնչափ յայտնի է որ գաւառացիք՝ ինչպէս և հեռաբնակ Հայ դրամատէրներ՝ տակաւին չեն ուզած և չեն փորձած օգուտ քաղել երկրաբանական այդպիսի ճոխ կալուածներէ մը զոր կը ներկայացնէ ամբողջ Հայաստան։

Վանայ նահանգը, իւր մէջ հաշուելով նորակազմ Հէքեարի կուսակալութիւնը, հանքերու նկատմամբ գլխաւոր երեք բաժանումներ ունի։ Ա. Հիւսիս-Արեւելեան մասը (Բերկրի գաւառ) որ քարածխոյ խաւեր և բեդրոլի չանմարաններ կը պարունակէ։ Բ. Հարաւ-Արեւելեան մասը, ուր տարածուած են ընտիր կաւիճի, մարմարի և կրային կազմութեան վերաբերեալ զանազան հանքեր։ Սօրատէր գիւղը որ Պաշգալէ աւանէն 6 ժամ հեռու է Հիւսիս-Արեւելեան կողմ՝ այնպիսի կաւճի հանք մը կը գտնուի, որմէ ելած կաւիճը կը գերազանցէ Եւրոպական կաւիճներն, որք այս տեղ կը բերուին։ Գ. Հարաւ-Արեւմտեան մասը՝ որ լեռնոտ երկիր մ'է, իւր երկաթի, պղնձի առատ հանքերով, ջրվէժներով եւ անտառներով ճարտարարուեստութեան կարեւոր կեդրոն մը կարող է լինիլ։ Երկաթի հանքերէն ոմանք կը բանուին քանի մը գիւղերու մէջ ի Կարճկան, որոյ ներսի կողմերը կը գտնուի նաեւ բիւրեղ, ջրաղացի աղիւս քարեր, որք 15—20 տարի կարող են դիմանալ։ Ինչպէս ըսինք՝ այս բազմազան հանքերէն քանի մը հանքերը կը բանեցնեն Կարճկանի գիւղացիք՝ նահապետական միջոցներով որք կսպառեն անթաւ անտառներ։ Փոսեր կը փորուին անտառաշատ տեղեր, եւ փայտեր դիզելով կը վառեն, երկաթ հալեցնելու եւ զտելու համար։ Երբ մերձակայ անտառներ հատնին՝ նոր փոսեր կը փորուին ուրիշ անտառներու մէջ։ Կարճկանցիք պղնձէ աման ալ կը շինեն իրենց երկաթէն, եւ իրենց շինած պղնձամանը լաւ ջուր ունի քան Եւրոպական պղնձամանը։ Ծծումբ և քարածուխ կը գտնուին ի Նորդուզ, և զարիկ՝ Ջուլամերիկի շրջակայքը։ Այս գաւառի մէջ կը գտնուի պատուական ջերմուկ մը որ նմանը չունի Հայաստանի և ոչ մի տեղ։ Ջերմուկի վրայ կը տեսնուին հին բաղանեաց հետքերը։ Ջուրը ապառաժի մը պատռուածքէ արագ դուրս կը հոսէ՝ ջրաղաց մը դարձնելու չափ առատութեամբ։ Քարի մէջ փորուած արուեստական դուռ մը աստիճաններով կը տանի դէպի պատռուածքի ներսերը, ուր սաստիկ տաք կընէ, և քիչ մ'ալ աւելի վեր՝ ջրոյ տաքութիւնը կիզիչ կը դառնայ, թէեւ 15 ոտնաչափ վար ջրի տաքութիւնն ախորժելի է։ Ծծումբի հոտը մինչեւ կէս քիլոմէտր հեռու կը տարածուի, եւ ջերմուկի առջեւէն ալ անհուն ջրոյ գետակ մը կ'անցնի։ Դժբաղդաբար այսպիսի գեղեցիկ ջերմուկ մ'ոչինչ օգուտ կը հասցնէ երկրին բնակչաց. շրջապատուած լինելով քանի մը հարիւր տուն օտարազգի բնակիչներէ՝ անպաշտպան եւ ամայի տեղ մը դարձած է։ Աղի հանքերը կը գտնուին Արտօսի ճիւղերուն մէջ. կան զանազան տեղեր ալ աղի աղբիւրներ։

Հայաստանի այսչափ բնական հարստութիւններէն կարելի եղածին չափ օգուտ քաղա՞ծ են իւր բնակիչներ. դժբաղդաբար պատասխանը բացասական է. ամէն ատեն մեր համազգիք ցոյց չեն տար ճշմարիտ վաճառականութեան և արհեստագործութեան ոգի մը, և այժմ մեր աչքի առջեւ տխուր [illegible] կը կատարէ, Կովկասեան մէջ, ուր Հայք երբեմն բռնած էին երկրին արհեստը եւ առեւտուր, պարտաւորուած են տեղի տալ ափ մը Գերմանացի գաղթականաց որք այժմ կը բանեցնեն Սիմեաց երկրի անտառները, և Պագուի Նաւթը։ Շատ ատեն չէ անցեր այն օրուանէ հրաւէրին վրայ՝ զոր Վիէննայի քանի մը Հայ դրամատէրք արին, մամլոյ միջոցաւ, զանազան տեղ գտնուած Հայերու՝ որպէս զի ընկերակցութիւն մը կազմուէր Պագուի նաւթը Եւրոպա արտահանելու և [illegible] մ'առաջքը առնելու համար. ոչ ոք պատասխանեց այդ հրաւէրին և այժմ Գերմանական ընկերութիւն մ'է այդ առեւտուրը կատարող՝ ի վնաս մեր Կովկասեան եղբարց։

Ափիօն Գարահիսար, 4/16 օգոստ. 84

Ուրախ չունեցայ դեռ ծանուցանել գաւառիս առաջնորդ Գեր. Գէորգ սրբազանի Կոստինդէն աստ ժամանումը. երկու ամիս կայ որ Ն. Սրբազնութիւնն տեղս է, թողլով Կոստինդ որ Բաղնա է առաջնորդեայ, և հրաժարելով այն դժուարութիւններէ զորս կը հայթայթէ այդ քաղաք անցեալ և ներկայ եղանակներուն. նա եկած է հովուել իւր հօտ, մխիթարել հօգւով և արծարծել նոր խանդ. Այս տեսակով բաղդաւոր են իւր գործեր և ընդարձակ իւր գործողութեան դաշտ։ Եթէ կարելի լինէր կը դնէի աստ մի «Օրակարգ», կը ստուերագծէի մի ուրուագիծ այն ամեն գործոց որք ազգային շրջանակի մէջ իւր նախաձեռնութեան կը կարօտին։ Անօգուտ սակայն, զի գիտեմ թէ ո՞րք են իւր առարկութիւնք — ժողովրդեան անտարբերութիւնն մասամբ դէպ ի ազգային գործեր և մասամբ այդ նպատակին դրամ յատկացնելու անյօժարութիւնն։ Այլ եւ'կ, տե'ս ժողովուրդն ինչ կ'ըսէ. աս ալ կ'առարկէ ի մէջ այլոց թէ սրբազանն մի քիչ անհոգ է, այլ ոչ չէ նա, դրուատելով միանգամայն անոր խաղաղասիրական ոգին, ուր իւր բարեմասնութեանց ամենագլխաւորն է։

Մեք ալ յարգելով Ն. Սրբազնութիւն իբրեւ բարձրաստիճան եկեղեցական և իբրեւ անձնաւորութիւն՝ իրաւամբ արժանի բոլոր յարգանաց իւր առաքինութեանց համար, ստիպուած ենք սակայն ժողովրդեան համախոհ գտնուիլ և մասամբ արդարացի համարել նորա առարկութիւններն։ Այս վճռով սակայն պէտք չէ իւր պարտքը կատարած համարի, այլ ընդհակառակն ազդակից լինի Ն. Գերապատուութեան, խրախուսէ զինքն իւր ձեռնարկութեանց մէջ և գոհացնէ արդէն շատ համեստ դպրոցական պիտոյքն։ Մեր խօսքը կուղղենք մանաւանդ ժողովրդեան բարձրագոյն և կարող դասուն, և կը հրաւիրենք կատարել ինչ որ իւր բաժինն կը պատկանի. առանց այս բարոյական քաջալերութեան և նիւթական գոհաբերութեան, առաջնորդական պաշտօնն՝ արդէն այնքան փափուկ՝ կը մնայ բոլորովին ամուլ, բոլորովին անօգուտ և ապարդիւն։ Եւ այն ատեն ահա, կը կրկնենք, հօտ ու հովիւ չեն կրնար ազատիլ դատապարտութենէ։

—Գաւառիս կառավարիչ Խալիրահիմ Սալիմ պէյ երկու օր առաջ կուսակալին հեռագրական մասնաւոր հրամանաւ ուղեւորեցաւ տեղէս ի Պրուսա և անտի ի Կ. Պոլիս։ Այս անակնկալ հրամանին վերաբերութեամբ ոչինչ կը խօսուի բացայայտ. միայն թէ տագնապալից երեւոյթ ալ չվերընծայուիր անոր, կառավարիչ պէյը յայտնած է այսչափ միայն թէ անձնական գործեր զինքն ի Պոլիս կը կոչեն և թերեւս վերադառնայ ընդ հուպ։ Իբր երկու տարի կայ որ Խալիրահիմ պէյ տեղս է. նորա պաշտօնավարութեան օրով նշանակելի գործեր չկատարուեցան, կրնայ ըսուիլ, բաց ի կառուղւոյ շինութեան ձեռնարկէն որոյ մասին խօսած եմ ժամանակին։ Ինքն էր պահպանողական մի անձ, եթէ ներելի է այսպէս անուանել. ունէր խաղաղ վարուելութիւն մի. իւր պաշտօնին հետամուտ լինելով հանդերձ, նա կը ջանար պահպանել իւր կացութիւնն և գործոց առաջնորդել աւելի, ինք կը հետեւէր անոնց ընթացքին. կը սիրէր աւելի գրել և ունկնդրել քան խօսիլ և թերեւս գործել. այս էր իւր քաղաքականութիւնը։ Իւր օրով ձեռնարկուեցան նաեւ երկու վարժարանաց շինութեան, բայց իւր կրթասէր տրամադրութեանց մասին նշանակելի ոչինչ կայ։

Կառավարութեան վարչական ժողովոյ շրջանի նորոգմամբ, նոյն ժողովոյ անդամ ընտրուեցաւ Գ. աղա Տիրաեան։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Փարիզի ժողովրդականութիւնը.—1881 ին Փարիզի մէջ կատարուած մարդահամարի արդիւնքն վերջին օրերս հրատարակուած է Սէնի քաղաքապետութեան կողմէ։

Այս մարդահամարէն կը տեսնուի թէ Փարիզ 2,239,928 բնակիչ ունի, որոյ 1,126,602ն իգական սեռէ։ Փարիզի առաջին մարդահամարին՝ որ 1700ին կատարուեցաւ՝ արդիւնքն էր 720,000 բնակիչ, և 1881 ի նախընթաց մարդահամարին՝ որ 1876 ին կատարուեցաւ՝ արդիւնքը 1,988,806, որոյ 1,007,968ն իգական սեռէ։ Ուրեմն Փարիզի բնակչաց թիւն 1876 էն ի վեր 251,122 աւելցեր է։ Այս բնակիչք 68,126 տանց մէջ կը բնակին, որոց 32,442 չորս յարկէ աւելի ունին։ Իբր քաղաքային վիճակ, Փարիզի մէջ կան 440,022 ամուսնացեալ այր և 446,297 ամուսնացեալ կին։ Սակայն, ընդհակառակն 621,569 մանչ և 557,054 աղջիկ կան։ Իբր հետաքրքրաշարժ ինչ, մարդահամարը կը յիշատակէ որ Փարիզի մէջ մարդ մը միայն 17 տարեկան և աղջիկ մը 14 տարեկան ամուսնացեր են։ Թուով 51,735 են այն այրերն որոց կինը մեռած է, և 125,251 այն կանայք որոց ամուսինը մեռած է։

Գալով տարիքի, 6,386 հոգի 80 տարեկանէ աւելի են, 2,747 հոգի 85—89 տարեկան, 640 հոգի 90ը և 138 հոգի 95ը անցած են։ Վերջապէս կան նաեւ հարիւրամեայ քան ծերունիներ, որոց ինն իգական սեռէ։

Ազգայնութեան տեսակէտով՝ օտարաց թիւն է 91,872 մարդ և 75,542 կին, որոց մէջ ամենէն բազմաթիւ են Պելճիացիք, Իտալացիք, Գերմանացիք, Զուիցերացիք, Անգլիացիք։ Կան նաեւ 149 Աֆրիկեցիներ և 65 Չինացիք։

Առանց արհեստի բնակիչք, ինչպէս դիեցիկ մանուկք, ուսանողք և աշակերտք, առանց գործի մարդիկ, մուրացիկք, Թափառաշրջիկք, վատահամբաւ կանայք եայլն 61,699 հոգի են, որոց 36,611ը իգական սեռէ։

Նորաձեւ հրէշ մը.—Ֆրանսայի Լիլ քաղաքին մէջ, Վիլնէօֆ փողոցը բնակող կին մը աշխարհ բերած է երախայ մը, որ երկու գլուխ ունի իրարմէ բոլորովին որոշ։ Բժիշկները կը կարծեն թէ երախայն պիտի կրնայ ապրիլ։

Ծախու կղզի մը.—Վերջին օրերս ծախու կը հանուէր անկախ կղզեակ մը՝ որ Սարտէնիա կղզւոյն ջրոց մէջ կը գտնուի։

Նմանօրինակ իրողութիւն մը կը պատահի Անգլիոյ մէջ։ Բրիտանական կառավարութիւնն աճուրդի դրած է, բաղդատաբար յոյժ համեստ գնով մը, Հէրմ կղզեակն որ Սէրք և Կէրնսէ կղզեաց միջեւ կը գտնուի։

Գնողն ամեն ազատութիւն պիտի վայելէ. իւր կղզւոյն բացարձակ տէր, ազատ ամեն հարկէ, պիտի կրնայ արգիլել համայն աշխարհի նաւուց մտնել իւր մանրադիտական թագաւորութեան։ Իրաւ է թէ անոր ալ անտարակոյս մերձաւորներն չպիտի անցնին օրինաց դէմ մեղանչել։

Ըստ իւր հաճոյս, պիտի կրնայ օրէնքներ հաստատել, իւր քմահաճոյքին համեմատ բարքերը կանոնաւորել, վերջապէս ամեն ինչ որ ուզէ։

Զարմանալի է որ սոյն առանձնաշնորհումներով հանդերձ՝ Հէրմ կղզին տակաւին չգնուած մնայ։ Աշխարհս մարդատեացներով լի է, և անոնցմէ ոչ մին բաւական յանդուգն գտնուած է երթալու հաստատելու այդ կղզեակին, ծովուն մէջտեղն, և անդ ապրելու Ռօպէնսոնի [illegible] և փրկարար կեանքով։

Կղզւոյն տարեկան հասոյթն 15-20,000 Ֆրանքի միջեւ կը տարուբերի, և բերքերն են բանջարեղէնք, պտուղք, ճագար և այլն։ Անգլիական կառավարութիւնը կը ջանայ գնորդաց հետ համաձայնիլ, բայց սակայն հարկ համարած է աճուրդն յետաձգել, որ 150,000 Ֆրանքի բարձրացած է միայն, գումար՝ որ անբաւական դատուած է։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԱՕՑ

Այս Կրթարանն հաստատուած է 1876 Յուլիս 1ին և, իբրեւ երկրորդական (սէքօնտէր) վարժարան, վաւերացեալ է Հասարակաց Կրթութեան Պաշտօնէութենէն։

Երկրորդական վարժարանի մէջ աւանդելի բոլոր ուսմունք և Հայերէն, Թուրքերէն, Գաղղիերէն, Անգղիերէն, և Յունարէն լեզուք կ'աւանդուին աստ ի ձեռն ուսուցչական ընտիր մարմնոյ մը։

Այս կրթական հաստատութեան մէջ տարուած առողջական և բարոյական խնամքն հաւասար է ուսումնական խնամոցն, որ արդէն ծանօթ է հայ հասարակութեան։ Սնունդն յոյժ գոհացուցիչ։

Կրթարանիս Թ. տարեշրջանն պիտի սկսի յառաջիկայ օգոստոս 27 երկուշաբթի օրէն. ուսանողաց վերամուտն՝ օգոստոս 23 հինգշաբթի օրէն։

Նոր աշակերտ տալու փափաքող ծնողք և այլ այցելուք կարեն տեսակցիլ Տնօրէնին հետ, օգոստոս 15 չորեքշաբթի օրէն սկսեալ, ամեն գլ. ուր. և կիրակի օրերն, մինչեւ կէս օր։

Հիմնադիր-տնօրէն
Յ. ԳՈՒՐԳԷՆ

8 օգոստոս 1884
յՕրթաքէօյ

ՕՍՄԱՆԵԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՈՆՍՈԼԻՏԷ ՊԱՐՏՔ

1881 Դեկտեմբեր 8|20ի Կայսերական Իրատէով Թողեալ հասոյթք

Գ· ՏԱՐԵՇՐՋԱՆ 84–85– ՅՈՒԼԻՍ 1884

	ՀԱՍՈՅԹՔ	Զուտ հասոյթ գաւառ. վարչ. ծախուց		Ընդհ. տնօրէնութեան կողմէ վճարեալ ծախք		ԶՈՒՏ ՀԱՍՈՅԹՔ Գաւառական եւ կեդրոնական վարչութեան ծախք							
										Նախորդ ամիսներէն		Գումար մինչեւ 1884 Յուլիս 31	
		Դրուշ		Դրուշ		Դրուշ		Օսմ. ոսկի		Օսմ. ոսկի		Օսմ. ոսկի	
Վեց անուղղակի տուրք	Ծխախոտ (յետնեալ տրոց գանձումն)	7,454,479	86	(1) 311,161	48	7,143,318	38	69,673	18	301,262	31	370,935	79
	Աղ												
	Դրոշմ												
	Ոգելից ըմպելիք												
	Ձկնարան												
	Մետաքս												
Ծխախոտ	Հասոյթք Ռէժիէն	...	...	...	...	...	...	...	...	309,782	61	309,782	61
Զանազան հասոյթք	Հարկ Պուլկարիոյ փոխանակեալ ծխախոտի տասանորդէն առնուելիք 100,000 Օսմ. լիրայով՝ մինչեւ ցորոշումն յիշեալ հարկին	476,059	26	...	...	476,059	26	4631	46	57,225	94	61,857	40
	Յաւելուած Կիպրոսի հասութից փոխանակեալ ծխախոտի տասանորդին յաւելուածով, կամ Մաքսատան վրայ փոխանակագրէ գոյանալիք 130,000 Օսմ. լիրայով	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
	Արեւելեան Ռումէլիի տարեկան հարկէն	1,541,666	...	...	...	1,551,666	...	15,416	66	61,666	72	77,083	38
	Թէմէթթէիի տուրք, Մաքսատունէն փոխանակագրով վճարելի	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
	Սերպիոյ, Գարատաղի, Պուլղարիոյ և Յունաստանի բաժին ինկած պարտք	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
	Գումար	9,472,205	12	311,161	48	9,161,043	64	89,721	30	729,937	88	819,659	18
Զանազանք	Պատրաստ դրամներէ առնուած շահ	588,366	48	...	...	588,366	48	5883	67	1247	39	7,131	06
	Լումայաշահ (աժիօ) դրամոց փոխանակութեան վրայ	3512	80	...	...	3512	80	35	13	40	13	5	
	Ընդհ. գումար	10,057,058	80	311,161	48	9,745,897	32	95,569	84	731,225	40	826,795	24

	Դրուշ		Օսմ. ոսկի		Օսմ. ոսկի
Վճարեալ գումարք Կայսերական Իրատէին 10 և երկու յօդուածներով նախատեսեալ արժէթղթերուն ի հաշիւ					
Ֆօնսօլիտէ պարտուց տոկոսին համար Եւրոպա քաշուած և Կ. Պոլիս վճարուած գումարք			294,826	22	
Օսմանեան Ընդհանուր Պարտուց Վարչական խորհրդին ընդհանուր ծախք			8,070	52	
Օսմ. Կայսերական Պանքան դրուած ոսկեդրամ			509,443	94	
» » » փոխանակելի դրամ	1,484,655	61	14,386	90	
Կեդրոնական վարչութեան սնտուկին մէջ ոսկեդրամ					
» » » » փոխանակելի դրամ	6,709	22	67	66	826,795 24

Ի Դիմաց Վարչական Խորհրդոյ
Նախագահ Ժ· ՕՊԱՐԷ
Խորհրդական Պատուիրակ Շ· ԿԷՇԷՐ

Կ· Պոլիս, 6/18 Օգոստոս 1884

---

(1) Որոյ 123,643.79 ղրուշը կամ 119,692. 40 ոսկին ի վճարումն պանտրօլներու (տուրք վերադառնալի Ռէժիին)։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊՈԼՍՈՅ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Կ· ՊՈԼԻՍ 5-11 ՕԳՈՍՏՈՍ

ՑՈՐԵՆ.— Շաբթուս մեծ մասը հանդարտութեան մէջ անցաւ Եւրոպայէն եկած աննպաստ լուրերուն պատճառաւ : Նոր ապրանաց երեւալուն անկում մը կը սպասուի : Հասաւ 10,000 գրիւ կակուղ ցորեն, 6,000 գրիւ Կիրգա և 4,000 գրիւ կարծր ցորեն : Վաճառեցաւ 4,000 գրիւ կարծր ցորեն, 10,000 գրիւ կակուղ և 6,000 գրիւ Կիրգա : Պատրաստ 5,000 գրիւ կակուղ ցորեն :

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ.—Այս շաբթու կարեւոր գործ մը չէ եղած, պատրաստից նուազութեան պատճառաւ· այսու հանդերձ 14 ղշի գրիւը բազմաթիւ գնողներ կան հրապարակին վրայ:

ԳԱՐԻ.— Տեղական սպառման համար 6,000 գրիւ վաճառեցաւ երկրորդական կակուղ տեսակ ի գին 11⅞ ղշ գրիւը : Պահանջը տկար լինելուն գները թոյլ են, թէև շատ ապրանք ալ չկայ հրապարակին վրայ :

ՋԱՎՏԱՐ.— Հրապարակին վրայ 14¼ ղշ գրիւը գնող կայ, բայց ապրանք կը պակսին : Տէմէշվարի ապրանաց վրայ մեծ գործեր ըլլալու վրայ են :

ԼՈՒԲԻԱ.— Ապրանք կը պակսին և ըստ այսմ կարեւոր գործ չկայ : Գները հաստատ են :

ԲԱԿԼԱ.— Շաբթուս գործ եղած չէ առ ի չգոյէ պատրաստից : Գնողներ կան 30-31 փարայի օխան :

ՍԻՍԵՌՆ.— Գնողք կը պակսին, գները կարի տկար են : Գործ չէ եղած :

ՔԹԱՆԱՀՈՒՆՏ.— Այս շաբթու 100,000 օխայ ապրանք վաճառեցաւ ի գին 25 ղշ գրիւը : Պահանջը լաւ է և գները հաստատ բռնուած :

ՍՈՒՍԱՄ.— Հրապարակին վրայ գնողաց թիւը լաւ է, բայց նոր ապրանք չհասան դեռ :

ՔԱՆԱՐԵԱ ԵԷՄԻ.— Այս շաբթու իբր 80,000 օխայ վաճառեցան ի գին 55 փրյ օխան : Պահանջը լաւ է հաստատ գներով :

ՔԷՆՏԻՐԻ ՀՈՒՆՏ.— Նոր ապրանք չերեւաց · անուանական 67 փրյ կ'առաջարկուի առանց վաճառողի :

ԱՓԻՈՆԻ ՀՈՒՆՏ.— Գործ մը չէ եղած · հրապարակը թոյլ է զի առատ ապրանք կը տեսնուի այս տարի :

ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՆՏ.— Գործ չէ եղած, թէև բաւական վաճառողներ ալ կան:

ԱԼԻՒՐ

Շաբթուս փոքր ինչ շարժում մը սկսաւ այս ապրանաց վրայ· գնողներ կան : Վաճառեցաւ այս շաբթու 17,000 պարկ : Պատրաստ կայ 31,000 պարկ, որոց 5,000 պարկը Օտէսա, 6,000ը Պրայլա, 20,000ը տեղական :

ԳԱՂԹԱԲԵՐՔ

ՇԱՔԱՐ.—Հասաւ 1,320 պարկ՝ որոց 120 պարկը Հոլանտական : Վաճառեցաւ 1,820 պարկ : Պատրաստ 1,500 պարկ : Հրապարակը հանդարտ էր այս շաբթու · գնոց միօրինակ անկման պատճառաւ գնորդք կը վարանին :

ԽԱՀՈՒԷ.—Հասաւ 1,200 պարկ : Վաճառեցաւ 1,000 պարկ : Պատրաստ 5,000 պարկ: Հրապարակին վրայ գնորդներ կան և բաւական գործ կը լինի հաստատ գներով :

ԲՐԻՆՁ.— Հասաւ 3,000 պարկ Անգլիական և 800 պարկ Իտալական : Վաճառեցաւ 2,000 պարկ Անգլիական և 800 պարկ Իտալական : Պատրաստ 5,000 պարկ Անգլիական և 400 պարկ Իտալական : Հնդկականաց վրայ լաւ գործեր եղան վաճառողաց թոյլտուութեան պատճառաւ : Իտալականք կը վաճառին հաստատ գներով :

ՄՈՄ.— Հասաւ ոչինչ : Վաճառեցաւ 600 սնտուկ : Պատրաստ ոչինչ : Պահանջը լաւ է, և գները առ այժմ հաստատ :

ՔԱՐԻՒՂ.— Հասաւ ոչինչ : Վաճառեցաւ 5,000 սնտուկ Ամերիկայի և 8,000 սնտուկ Ռուսական : Պատրաստ 13,000 սնտուկ Ամերիկայի և 22,000 սնտուկ ու 800 վարիլ Ռուսական : Ռուսական կազերը կը վաճառին բաւական քանակութեամբ : Գները ընդհանրապէս հաստատ են :

ԱՊԱԿԻ.— Հասաւ ոչինչ : Վաճառեցաւ 500 սնտուկ : Պատրաստ 14,500 սնտուկ : Այս տեսակին վրայ գործ կը լինի · գները բռնուած են :

ՊՂՊԵՂ.— Գները բռնուած և պահանջը լաւ :

ՈԳԻ

ԱԼՔՈՂ.—Առ ի նուազութենէ գործառնութեանց գները անկման մէջ են: Հասաւ 80 տակառ : Վաճառեցաւ 40 տակառ : Պատրաստ 120 տակառ :

ՌՈՄ.— Պահանջը տկար է և գները ալ աւելի : Հասաւ ոչինչ : Վաճառեցաւ 50 տակառակ : Պատրաստ 350 տակառակ :

ՄԵՏԱՂՔ

ԵՐԿԱԹ.— Եւրոպայի հրապարակաց վրայ կարեւոր փոփոխութիւն մը տեղի չէ ունեցած : Հրապարակնիս կը շարունակէ իւր գործունէութեան մէջ, հաստատ գներով: Այս շաբթու 250 թօնօ եկաւ : Վաճառմունք 300 թօնոյի կը հասնին :

ԱՆԱԳ— Հասաւ 120 տակառակ : Վաճառեցաւ 70 տակառակ : Պատրաստ 400 տակառակ : Շաբթուս բաւական գործեր եղան, բայց անկեալ գներով:

ՋԷԼԻԿ.— Հասաւ ոչինչ : Վաճառեցաւ 200 սնտուկ: Պատրաստ 3,100 սնտուկ : Հրապարակը առաջին ձեռքէ գործեր կը լինին, բայց ընդհանրապէս տկար է :

ՔԱՐՖԻՑԱ.— Հասաւ 200 տակառակ : Վաճառեցաւ 1500 տակառակ : Պատրաստ 25,000 տակառակ: Առաջին ձեռքէ վաճառմունք կըլլան հաստատ գներով :

ԹԷՆԷՔԷ.— Հասաւ 200 սնտուկ : Վաճառեցաւ 200 սնտուկ : Պատրաստ ոչինչ : Առաջին ձեռքերու քով պատրաստ չկայ · պահանջը լաւ է հաստատ գներով :

ՃԻՆԿՕ.— Հասաւ ոչինչ : Վաճառեցաւ 50 տակառակ : Պատրաստ 1,050 տակառակ : Հրապարակը հանդարտ է թոյլ գներով:

ՄԱՆԻՖԱԹՈՒՐԱ

ՄԱՀՈՒՏԻ.—Շաբթուս առաջին ձեռքերէ 25 հակի չափ վաճառմունք եղան, որոց մեծ մասը լաւ տեսակ ապրանք մը ի գին 5½ ղրշ : Հրապարակը հանդարտ է :

ԼՈՆԿ ԳԼՕԹ.—Այս շաբթու գործ մը չէ եղած նշանակութեան արժանի :

ԵԷԼՔԷՆ ՊԷԶԻ.— Երկրորդ ձեռքերէ բաւական գործեր եղան այս շաբթու :

ԽԱՄ ԱՍԹԱՐ.— Առաջին ձեռքէ 8¼ եարտանոց ապրանք վաճառեցան ի գին 46—48 ղրշ թոփը : Պահանջը լաւ է :

ԹԷՆՉԻՖ.—Այս ապրանաց վրայ գործերը աննշան են, որով և գները կարի թոյլ:

ՊԱՍՄԱ.— Միակ տեսակն է գրեթէ որուն վրայ լաւ գործեր եղած են այս շաբթու . մեծաքանակ վաճառմունք եղան «Լեհէլէ», և քէմպէի վրայ յատկապէս :

ՄԱՆԱԾ.—Մանածի վրայ գործերը խիստ աննշան եղան այս շաբթու : Մթերքը խիստ մեծ է, որով գները անկման ենթակայ են :

ՀԱՆՔԱԾՈՒԽ

Գործողութիւնք կարի աննշան են որով և գներնիս անկման կը միտին : Հասաւ 3400 թօնօ Քարտիֆ : Վաճառեցաւ 3400 թօնօ : Պատրաստ 16,000 թօնօ :

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ

ԹԻՖԹԻՔ.—Այս շաբթու վաճառեցաւ 262 հակ որոց 16 հակը Պէյպազար 24, 37 հակը Զանկըրը 22, 155 հակ Ենկիւրիւ 22 և 54 հակը Եօզղատ 20ղրշ օխան : Պատրաստ 7,000 հակ : Հրապարակը եթէ ոչ տկար գոնէ հանդարտ է : Լոնտրայի վաճառմունք 500 հակի կը հասնին լիպրան 19½ բէնսէ 20½ բէնս : Գները տկար են :

ԲՈՒՐԴ.— Բուրդերու վրայ այս տարի խիստ քիչ գործ կ'երևի, և եթէ այսպէս շարունակուի՝ գնոց վրայ մեծ անկում մը կրնայ սպասուիլ:

ՄԵՏԱՔՍ.—Վաճառեցաւ 11 հակ Խօքանտ 15· 98· 8 հակ Ռումէլիի մէճիտիէ ղշ 150-162· 4 հակ մետաքս Քիւթայիսի 92-115· 3գասյա Քիւթայիսի 75-76 ղրշ ու 9 հակ Նուխի 40 Ֆր· օխան : Պատրաստ 120 հակ : Հրապարակի մնայուն գործերը միմիայն տեղական սպառման համար են :

ԲԱՄՊԱԿ.—Կարեւոր գործ մը չկայ այս շաբթու, գները տկար են :

ՔԷՆՏԻՐ.— Այս վաճառքը խիստ հանդարտ է· տեղական սպառման համար փոքր փոքր վաճառմունք կը լինին անփոփոխ գներով:

ԿԱՊԵՐՏ.— Այս շաբթու վաճառեցաւ 250 կտոր հին Շիրվանի նամազի ի գին 34 Ֆրանգ · 25 կտոր գորգ Գազաքի 51 Ֆր· հատը և 175 մէթրօ Ֆէրաղան 18½ Ֆր· մէթրօն : Պատրաստ 4500 հատ: Հրապարակը հանդարտ էր այս շաբթու · լաւ տեսակաց համար հաստատ գներով գնողներ կան, բայց մթերքը կը պակսի :

ԱՓԻՈՆ.— Այս շաբթու վաճառեցաւ 9 կողով Կէյվէ Նոր ի գին 175 ղրշ օխան Բէւէէլ: Պատրաստ 250 կողով, որոց 30ը հին և 220ը նոր : Հրապարակը հանդարտ է, գնորդք միշտ քաշուած են որով և գները տկար ·

ՔԻԹՐԷ.— Այս շաբթու ամենևին գործ չեղաւ : Պատրաստ 8000 օխայ : Հրապարակը թոյլ է, և բնականաբար գնորդաց նուազութեան պատճառաւ գները լքեալ են:

ՄԱՀՄՈՒՏԻԷ.— Այս շաբթու վաճառմունք տեղի չունեցան · գները հաստատ, պահանջը լաւ է :

ՍԱԼԷՊ.— Այս շաբթու վաճառմունք տեղի չունեցան : Հրապարակը հանդարտ է, գները թոյլ են :

ՄԵՂՐՄՈՄ.— Վաճառմունք չեն եղած այս շաբթու : Պատրաստ 1,300 օխայ : Հրապարակը հանդարտ է :

ԿԱՂԻՆ.— Այս շաբթու կարեւոր գործ մը տեղի չէ ունեցած · առ ի չգոյէ պահանջի՝ գները տկար են :

ՃԷՀՐԻ.— Այս շաբթու որևէ վաճառմունք տեղի չունեցան : Պատրաստ 280 պարկ : Հրապարակը կարի հանդարտ է առանց գնորդաց, որով գները տկար են :

ՄԱԶԻ.— Վաճառեցաւ այս շաբթու 30 պարկ սև ի գին 6¼ օխան : Պատրաստ 130 պարկ որոց 60ը ճերմակ և 70ը սեւ · հրապարակին վրայ գնորդներ կան · գները հաստատ են, և տեղական սպառման համար վաճառմունք միշտ տեղի կունենան :

ՄՈՐԹ.—Այս շաբթու մորթի վրայ եղած գործերը կարի աննշան են :

ԿՈՎՈՒ ՄՈՐԹ.—Քիչ մը Օտէսայի՝ ապրանք վաճառեցաւ ի գին 6 ղրշ օխան :

ԱՅԾԻ ՄՈՐԹ.— Վաճառմունք գրեթէ չէ եղած այս տեսակին վրայ :

ՈՉԽԱՐԻ ՄՈՐԹ.— Մաս մը, 500 կտորի չափ տեղական ապրանք վաճառեցան ի գին 16½ ղրշ զոյգը :

ԵՂՋԻՒՐ.— 10 պարկ 600 կտոր լաւ ապրանք վաճառեցան ի գին 4⅛ օխան :

ԸՆԹԱՑԻԿ ԳԻՆԵՐ

Ցորեն Կիրգա Ռուսիոյ	Լիպրայ	57—58	Ղշ 20½—22	Քիլէն
» » Դանուբի	»	57—59	» —	»
» Կակուղ Կալաց և Պրայլա	»	57—58	» 19½—21	»
» » Պուլղարիոյ	»	57—58	» 19—20	»
» » Ռումէլի	»	57—59	» 20— 21½	»
Եգիպտացորեն, Կալաց, Իսմայիլ և Օտէսա	»		» 14—14¼	»
» » Օրտու և Տաճկական			» 13—13¾	»
Գարի կակուղ			» 12—12⅛	»
» հաստ			» 11—11½	»
Ջավտար			» 14¼—	»
Քթանահունտ (քէթէն թօհումը)			» 25—	»
Գանար եէմի			Փրյ 55 — 56	Օխայ
Նօխուտ Պալըքէսէր			» 40 — 45	»
» Աթէնք			» 40 — 55	»
Քէնտիրի հունտ			» 67 —	»
Պագլա			» 30 — 31	»
Սուսամ Մուտանիա Պալըքէսէր			» 105 —	»
» Մէրսին			» 112 —	»
Աֆիօնի հունտ			» 54 — 55	»
Լուբիա Օրտու			» 130 —145 100	»
» Դանուբ			» 140 —150 »	»
Օտէսա Ա· Ալիւր			Ղրշ 121 —128	Պարկը
» Բ· »			» 105 —112	»
» Գ· »			» 88 — 93	»
Ազիմա			» 88 — 90	»
Պրայլա ափգիկանի հետ խառնուած			» 78 —	»
Պրայլա			» 78 —	»
Վառնա			» 74 —	»
Շըմէնտըֆէր			» 75 — 77	»
Խահուէ			Ղշ 740—780—830	Օխյ· 100 ոսկին
Լեղակ պէնկալ			» 80—110	» » »
» Քուրբայ			» 60— 80	» » »
Որդան կարմիր սեւ			» 17— 18	» » »
» կարմիր թուխ			» 15—	» » »
Պղպեղ			» 11¾	» » »
Կինամոն (դարչին)			» 5½-6¼	» » »
Գարէնֆիլ			» 8—9	» » »
Թէյ սեւ ստորին			» 12— 16	» » »
Թէյ առաջին և լաւ			» 27— 88	» » »
Շաքար Հոլանտիոյ			» 152—160	կենդինըը 103 »
» Դրիէսթէ Ա· (պարկի մէջ)			» 146	» »
» » Բ· (»)			» 130	» »
» » Գ· (»)			» 120—	» »
Ծծումբ			» 34—35	» 100 »
Խունկ (Գիւնլիւք)			» 210—230	» »
Բրինձ Իտալիոյ Ա· Ռիզօն			Ֆրանգ 49—	Պարկը » »
» » Բ· »			» 48	» » »
» » Ա· սովորական			» 42	» » »
» » Բ· »			» 39	» » »
» » Գ· »			» —	» » »
» Հնդկական			Ղրշ 124—126—129	» » »
Գօլա Գաղիական			» 3¾	Օխյ » »
» Անգղիական			» 162	Սնտուկը » »
Մոմ			Ղրշ 7¾	Քիլօ » »
„ Գաղիական			„ 94—	» »
Կազ Ամերիկայի սնտուկ			» 28½—32-35	» »
» Ռուսիոյ			» 26½—29½—31	» » »
» » (վարիլի մէջ)			Փարայ 40—42	Օխյ » »
Ոգի Ռուսիոյ Օլատօֆքա 16 աստիճան			Օխայ 24½—25	1 Ոսկայ
» » Սօտինաքի			» 26—26½	»
» » Խարքով			» 27—	»
» Վար տեսակ Սէլանիկ և այլն			» 29 — 38	»
Ռօմ Թրիէսթէ			Կալլօն 20 —	»
» Անգղիոյ			9¼—9½	»
Անգղիական երկաթ (չուպուգ)			45	Կենդինարը
» Երկաթ (տէմէտ)			45	»
Շուէտի » (չուպուգ)			78 —80	»
» » (տէմէտ)			82	»
Տախտակ » (Սաճ) Թիւ 1— 4			63 —	»
» » » » 5—10			70 —	»
» » » » 11—14			80 —	»
Կլոր			90	»
Զէմպէր սովորական			59	»
» Մեծ գլըք			65 —67	»
Անագ (գալայ)			580—585	»
Կապար (սաչմա)			110	»
» Տախտակ			118—	»
» Խողովակ			110—	»
Զէյիք			Ղրշ 125—133	Սնտուկը
Գարֆիցա 45 քիլոնոց			» 58— 63—	Վարիլը
Թէնէքէ			» 190—	2 Սնտուկը
Պղինձ			» 11⅞-12¼	Օխյ »
Ցինկօ			Ֆրանգ 69—70	100 Օխյ
Հանգածուխ Նիւգասըլ (ի վաճառատուն)			17 Շ· 6 Բ· — Շ· 0 Բ·	Թօնօն
» » (ծովու վրայ)			19 » 6 » — 20 » 0 »	»
» Գարտիֆ (ի վաճառատուն)			19 » 0 » 19 » 6 »	»
» » (ծովու վրայ)			22 » 0 » — 22 » 6 »	»
» Հարթըլբուլ			16 » 0 » — 16 » 6 »	»
Լիվէրբուլ (անուանական)			15 » 0 » — 16 » »	»
Մահուտի			Ղրշ 6—6½	Լիպրան Ոսկի »
Ամերիգան ամբողջ եարտա			» 4¾— 5½	» » »
» սպիտակաւոր			» 3½ —5¼	» » »
Ամերիգա (լօնկ գլօթ) լաւ տեսակն			» 4—4¾	» » »
» » » փոքր լիպրա			» 5—	» » »
» » » Ներկուելու (գօտինքթն)			» 5⅜— 5½	» » »
Եէլքէն պէզի լաւ տեսակ			» 4⅜— 4½	» » »
» » երկրորդական			» 4—4¼	» » »
Խամ ասթար (չըրթինկ) լաւ տեսակ			» 48 — 50	Թօփը » »
» » » միջին »			» 50 — 60	» » »
» » » վար »			» 60 — 70	» » »
Միւլ 4 Թիւ (չափսը) 3 Թօփը (30-35-38 ինչ·)			Ղրշ 41¼—	» 112
» 16 » (Թէնդիֆ) » » (· · · · · · ·)			» 38—38¼	» »
» 26 » (Աքօչիա) » » (· · · · · · ·)			» 51½—	» »
Մանած Վաթէր 4—14			Ղրշ 34—37½	փաքէթը » 106
» » 18—28			» 45—48	» » »
» Էքստրա (Ֆիլէմէնկ) 4—14			» 40—53	» » »
» » (· · · ·) 18—28			» 49—59	» » »
» Էքստրա գրօմիթօն 16—24			» 65—66	» » »
» Մավի 8—14			» 53—58	» » »
» » 20—24			» 67—70	» » »
» Կարմիր Իտալիոյ 4—14 լաւ			» 65—70	» » »
» » » »— երկրորդ			» 55—65	» » »
» » Զուիցերիոյ Թիւ 20			» 75-85-90	» » »
» » Իտալիոյ » »			» 65—70	» » »
Թիֆթիք առաջին տեսակ			Ղշ 22½-24	օխյ 100 ոսկի
» երկրորդ »			» 20 — 22	» » »
» ստորին »			» 6 — 16	» » »
» վան			» 12½—13½	» » »
Բուրդ Քասապ պաշի Ա·			» 8 — 8½	» » »
» » » Բ·			» 6 —6½	» » »
» Փըրմա Ա·			» 6¼— 6½	» » »
» » Բ·			» 4— 4½	» » »
Մետաքս Խօքանտ			» 182 —205	» » »
» Նուխի			Ֆրնք 33 — 41	» » »
» Ռէշտ			» 26 — 34	» » »
Բամպակ Հալէպ			Ղշ 6 —	» » »
» Ադանա			» 6¼—6½	» » »
» Իզմիր և շրջակայք			» 6¾— 7½	» » »
Ափիոն Մալաթիա			» 230—240	» » »
» Սէլանիկ			» 225—230	» » »
» Զիլէ Թօքաթ			» 210—220	» » »
» Պալըքէսէր			» 200—205	» » »
» Ենկիւրիւ			» 195—200	» » »
» Նալը խան Պէյ պազար			» 185—190	» » »
» Կէյվէ Պիլէճիկ			» 180—185	» » »
» Զըքընթը			» 110—135	» » »
Քիթրէ առաջին ճերմակ			» 27 28	» » »
» աղխատուած ճերմակ			» 21 22	» » »
» լաւ բնական »			» 19 — 20	» » »
» սովորական »			» 18 — 19	» » »
» լաւ դեղին			» 15 — 16	» » »
» երկրորդ դեղին			» 12 13	» » »
» Զամուր			» 3 — 4	» » »
Սալէբ լաւ տեսակ			» 16- 16½	» » »
» երկրորդ տեսակ			» 14½—15	» » »
Մահմուտիյէ առաջին ճերմակ			» 220 —240	» » »
» երկրորդ			» 100 120	» » »
» երրորդ			» 60 — 80	» » »
Մեղրամոմ լաւ տեսակներ			» 20 25	» » »
» ստորին »			» 19 — 20	» » »
Կաղին Տրապիզոն			» 82—83	կենդնր· » »
» Քէրասունի			» 82—83	» » »
Ճէհրի Էկին			» 12-12½	Օխյ » »
» Քայսար			» 12-12½	» » »
» Անկորա			» 11-11½	» » »
» Թօքաթ			» 9½-10	» » »
» Զօրում			» 9½—10	» » »
» Վար տեսակներ			» 9 —9⅝	» » »
Եղջիւր			» 3½— 4	» »
Մորթ գոմէշի չոր			» 9¼— 9½	» »
» թաց			» 6¼—6½	» »
» կովի չոր			» 9—9½	» »
» թաց			» 5¾— 6	» »
» Ոչխարի			» 18 — 26	» »
» Այծի			» 18 — 20	» »
» Գառին			» 16 —18½	» »
» Այծուկի			» —	» »
» Նապաստակի			» —	» »

ՀԱՄԱՌՕՏ
ԸՆԴՀԱՆՈՒՐ Պ· ՏՄՈՒԹԻՒՆ
Դպրոցաց համար
Հին պատմութիւն Արեւելեան ժողովրդոց
Հատոր Ա·
(Երկրորդ Տպագրութիւն)
Յօրինեց
Մ· ՄԱՄՈՒՐԵԱՆ

Կեդրոնատեղին է Ց· Ջէնճիրճեան էֆէնտիի գրատունը ի Կ· Պոլիս Մահմուտ փաշա : Գին 6 ղրուշ :

ԻԼԱՆ
ՊԱՊԸ ՍԷՐԱՍՔԷՐԻ

Իքինճի օրտայի հիւմայունի մէրքէզ վէ մէվագիյինտէ պուլունան պիյատէմէ ասաքիրի շահանէ նամը ազըգ մուաջէնաթը իչուն պին իւչ եիւզ սէքսէն էյլուլի իպթիտասընտան շուպաթը նիհայէթինէ տէկին չէրայիթի մուգարըրէյէսի վէճհ իլէ աչըգ մայինտէն վիրիլէճէք հըմթանըն պէհէր եիւզ դըրհէմի ճէտիտի մուգապիլինտէ, Եաիրնէ, վէ Մուսթաֆա փաշա վէ Պըրգ քիլիսէ վէ Տէմիթօքա վէ Լիւլէ Պէրգօս մէվգիլէրինտէ եէթմիշ, վէ Կիւմիւլճինա վէ Կէլիպօլու վէ Քէշան վէ Եսկիճէ մէվգիլէրինտէ՝ ալթմըշ պէշ, վէ Օրթաքէօյտէ՝ ալթմըշ, վէ Թըրնօվաճըգտա՝ էլլի դըյէ նան վէրմէ.ք իւզրէ Թալիպի էօհտէսինտէ օլտուղունտան, ուժմուլինէ վէ պիր վէ եա պիր գաչ մէվգիյէ տահա զիատէ նան իթասընա Թալիպ օլանլարըն վէ չէրաիթինի աղնամագ իսթէյէնլէրին լէվազիմաթը ումումիյէ տայիրէսինէ կէլմէլէրի իլան օլունուր :

13 աղօսթոս 1300 1—3

Սըվազ Թիւճճարընտան Նաճարեան Խաչիկ աղանըն մուվագգաթէն իֆլասընա Սըվազ մահքէմէի թիճարէթինճէ հիւքմ օլունարագ, մուամէլէի գանունիյէսի տէրուէսթէ իճրա պուլունտըղը օրաճա իլան գըլընմըշ օլտուղընտան, Տէրսաատէթճէ տախի իլանը վէ ասհապը մաթլուպըն էվրագ վէ սէնէտաթ վէ տէֆաթիր իլէ պէրապէր պիզզաթ վէ եախօտ պիլվասէթա մահքէմէի մէզքիւրէյէ միւրաճաաթ իյլէմէլէրի մահալլինտէն վուգու պուլան իշար իւզէրինէ Տէրսաատէթ մահքէմէի թիճարէթ իճրա տայիրէսինտէն իլան օլունուր :

10 աղօսթոս 300

ԻԼԱՆ

Ժանտարմա տայիրէսի իլէ տէրը սաատէթ ժանտարմա ալայը իչուն իւչ եիւզ սէնէսի չիլթայէսինէ մահսուսէն միւպայաասընա լուզում կէօրիւնան եիւզ սէքիզ պին ալթը եիւզ եէթմիշ գըյէ քէօմիւր իլէ տօ.քսան չէքի հաթապըն մահը ճարիի աղօսթօսըն օն պէշինճի չէհարշէնպէհ կիւնիւնտէն իթիպարէն միւնագասասընա իպթիտար գըլընարագ հուլուլ իտէճէ.ք չէհրը իլուլըն պիրինճի կիւնիւ տախի գարարը գաթիսի իճրա օլունաճաղընտան մէզքիւր.էլ մըգտար քէօմիւր իլէ հաթապըն իթասընա Թալիպ օլանլէրին գիւր օլունան չէհարշէնպէհ կիւնիւնտէն իթիպարէն ճիւմաա իրթէսի վէ բազար իրթէսի վէ չէհարշէնպէհ կիւնլէրի սաաթ ալթըտան տօգուզա գատար տայիրէի մէրգումէյէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր :

13 աղօսթօս 300

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ԴԵՂԱՐԱՆ
Պ· եւ Հ· ՔԻՒՋԻՒՔԵԱՆ
ԵՂԲԱՐՑ

Երկար ժամանակէ ի վեր՝ դեղավաճառութեան եւ դեղագործութեան զբաղելով հասարակութիւնը գոհացնելու համար մեր ձեռքէն եկած ջանքը խնայած չըլլալնիս յայտնի է մեր պատուարժան յաճախորդաց և բոլոր հասարակութեան։ Այս անգամ ալ, մեր յարգոյ յաճախորդաց դիւրութիւն մ՚ըլլալու համար, դեղարան մը բանալ փափաքելով, շատ տարիներէ ի վեր ամենուն ծանօթ Պոլսոյ Եէնի-Ճամի փողոցի 26 Թիւ մթերանոցէն զատ՝ նոյնպէս Կ. Պոլիս կամուրջին դիմացը 77 Թիւ «Պ. եւ Հ. Քիւչիւքեան եղբարք» անուամբ դեղարան եւ մթերանոց (տէբօզիթօ) մ'ալ բացած ենք, ուր Ֆրանսայի եւ Անգլիոյ քիմիական բաղադրութիւններն ու զանազան դեղերը, մեծ խնամով շինուած, եւ ամենէն ընտիր տեսակները կը գտնուին : Ասոնցմէ զատ ամեն ատեն գործածուած զանազան տեսակ գինի, աղիւ ձկան իւղ, Նօրվէկիոյ չօքօլա, քօնեաք եւ ուրիշ ըմպելիք միշտ կը գտնուին : Եկած դեղագիրք խիղճով թարմ դեղերով, և մեծ խնամով կը պատրաստուին : Ասոնցմէ զատ դեղարանին վերնայարկը բժշկաց համար յատուկ տեղ որոշուած ըլլալով, հիւանդութեան մը համար բժշկի հետ խորհրդակցել ուզող անձինք, մեր դեղարանը գալով, ամեն կերպով օգուտ կը տեսնեն :

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ
ՔԻՄԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆ
ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ

ԼՈՒՍԱՆԿԱՐ
ԳԱՐԱԳԱՇԵԱՆ
677 ՄԵԾ ՓՈՂՈՑ ԲԵՐԱՅԻ 677
ԳՈՒԼԷ-ԳԱՊՈՒ
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԼՈՒՍԱՆԿԱՐՔ
Փոքր դէմքով լուսանկար [illegible] ներկով կը հանուին
Տեսարանք Կ· Պոլսոյ
Արեւելեան հանդերձից պատկերներ
Լուսանկարչութեան վերաբերեալ նիւթեր
Գիները խիստ դիւրամատչելի են :
ԼՈՒՍԱՆԿԱՐ

Արտօնատէր, Ս· ՏԱՄԱՏԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ